

ՄԵՐ ԱՆԿԻՒՆԵՆ

Վիեննայէն Մինչեւ Նիւ Եորք

Վիեննայի մէջ տեղի ունեցաւ Յայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի եւ Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի միջեւ առաջին պաշտօնական հանդիպումը՝ ԵԱՀԿ Մինսկի խումբի հովանաւորութեան տակ: Հանդիպումի ակարտին Մինսկի խումբի համանախագահները հրապարակեցին յայտարարութիւն մը, շեշտելով որ, հանդիպումը տեղի ունեցած է դրական եւ կառուցողական մթնոլորտի մէջ եւ հնարաւորութիւն տուած է երկու առաջնորդներուն պարզաբանելու իրենց դիրքորոշումները:

Բնականաբար այս յայտարարութեան կարելի չէ եզրակացութիւններ կատարել, սակայն մէկ բան յստակ է, որ վերջին շրջանին Ատրպէյճանական կողմը դարձած է շատ ակտիվ գոյուշաւոր, եւ բանակցութիւններու սեղանին եւ սահմանագծի վրայ: Հաւանաբար այս բոլորին մէջ որոշ դեր ունեցած է Յայաստանի որդեգրած նոր դիրքորոշումները՝ բանակցային գործընթացին Արցախի մասնակցութեան պահանջը ներկայացնելով եւ տագնապի լուծման նախկին առաջարկներու՝ յատկապէս Մատրիտեան սկզբունքներու անընդունելի ըլլալու կապակցութեամբ:

Անդին, ովկիանոսի միւս կողմը՝ Նիւ Եորքի մէջ Հայ համայնքի ներկայացուցիչներու հետ հանդիպումի մը ընթացքին, պաշտպանութեան նախարար Դաւիթ Տոնոյեան կատարեց ուշագրաւ յայտարարութիւն մը ըսելով որ, Ատրպէյճանի կողմէ առաջ մղուող «խաղաղութիւն տարածքներու դիմաց» առաջարկին Հայկական կողմը ունի իր պատասխանը՝ «նոր պատերազմ, նոր տարածքներու դիմաց»: Այսինքն, եթէ Ատրպէյճան դիմէ պատերազմական գործողութիւններու, Հայկական բանակը պատրաստ է անցնելու հակայարձակման ու նոր հողեր վերցնելու իր հսկողութեան տակ: Թէեւ, առաջին անգամ չէ որ Տոնոյեան նման ակնարկ կը կատարէր, սակայն այս անգամ շատ ակտիվ յստակ բանաձեւուած էր ու հասցեագրուած:

Ակնյայտ է որ, Հայաստանի նոր իշխանութիւնները Արցախեան հարցով դարձած են օրակարգ թելադրող կողմը: Պատերազմական գործողութիւններու վերսկսման պարագային պատրաստ են դիմագրաւելու բոլոր հաւանականութիւնները:

Ֆութպոլի մէջ ասացուածք կայ, որ կ'ըստ՝ «յարձակումը պաշտպանութեան լաւագոյն միջոցն է»: Այս սկզբունքը կը թուի որդեգրած ըլլալ Հայկական կողմի ներկայացուցիչները՝ Վիեննայէն մինչեւ Նիւ Եորք ու առաջին արդիւնքները բաւական դրական են ու ցայտուն:

«ՄԱՍԻՍ»


Վիեննայի Բանակցութիւններուն Քննարկուած է Ղարաբաղի Մասնակցութեան Հարցը. Փաշինեան

Մարտ 29-ին, Վիեննայի «Պրիսթըլ» հիւրանոցին մէջ տեղի ունեցաւ Լեւոնային Ղարաբաղի հակամարտութեան խաղաղ կարգաւորման շուրջ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի եւ Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի հանդիպումը:

Վերջին օրերուն ատրպէյճանական կողմը հանդէս կու գայ յայտարարութիւններով, որոնք դուրս են համատեղ յայտարարութիւններու շրջանակներէն, այս մասին ֆէյսպուքեան ուղիղ հեռարձակմամբ յայտարարեց Հայաստանի վարչապետը՝ անդրադառնալով Վիեննայի բանակցութիւններուն: Բանակցութիւններէն ետք Իլհամ Ալիեւը ըսած էր. «Կարելոր է այն հանգամանքը, որ բանակցութիւններու ձեւաչափը անփոփոխ մնաց. բանակցութիւնները կը վարեն Հայաստանը եւ Ատրպէյճանը, ինչպէս եւ երկար տարիներ շարունակ»:

«Համաձայնէք, որ սա շատ լուրջ խնդիր է առաջացնում եւ ընդհանրապէս հարցի տակ է դնում գործընթացի ողջ լրջութիւնը», - ըսաւ վարչապետը:

Հստ ֓աշինեանի, բանկցութիւնները արդիւնաւէտ դարձնելու համար պէտք է մոռնալ հին եւ



Փաշինեան եւ Ալիեւ Վիեննայի մէջ կայացած հանդիպումի ընթացքին

կրկնուող թեմաները, որոնք ցոյց տուած են իրենց անարդիւնակտուութիւնը եւ նոր բանակցային գործընթացին մէջ պէտք է նոր մօտեցումներով առաջնորդուիլ: Վարչապետը վերահաստատած է՝ Վիեննա գացած են Ստեփանակերտի մէջ յայտարարած օրակարգով եւ Ղարաբաղի բանակցային սեղան վերադառնալու հարցը քննարկուած է: «Այդ նիստում ես ասել էի,

որ մեզ համար շատ կարելոր է Արցախի ներկայացուցիչներին մասնակցութիւնը բանակցային գործընթացում, եւ շատ կարելոր է ընդգծել, որ ես ասել էի նաեւ եւ հիմա էլ ասում եմ, որ սա բանակցային ձեւաչափի փոփոխութեան պահանջ եւ ակնկալիք չէ, ոչ էլ քմահաճոյք, ոչ էլ նախապայման:

Շար.ը էջ 5

Պաշտպանութեան Նախարարի Խորհրդական Արտակ Բշտիկեան Այցելեց ՍԴՀԿ Գրասենեակ



Հայաստանի պաշտպանութեան նախարարի խորհրդական Արտակ Բշտիկեան ՍԴՀԿ ներկայացուցիչներուն հետ

Ուրբաթ, Մարտ 29-ին ՍԴՀԿ Կլէնտէլի գրասենեակը այցելեց Հայաստանի պաշտպանութեան նախարար Դաւիթ Տոնոյեանի խորհրդական Պր. Արտակ Բշտիկեան, ընկերակցութեամբ ՀՀ Լոս Անձեւըսի Հիւպատոսութեան խորհրդական Ռազմիկ Ստեփանեանի:

Գրասենեակէն ներս հիւրերը ընդունուեցան ՍԴՀԿ ներկայացուցիչներու կողմէ, գլխաւորութեան Արեւմտեան Ամերիկայի վարիչ Մարմինի ատենապետ Գրիգոր Խո-

տանեանի: Հանդիպումի ընթացքին Պր. Բշտիկեան ներկայացուց պաշտպանութեան նախարարութեան նոր ռազմավարութիւնը, Հայ-Ատրպէյճանական սահմանին վրայ տիրող ընդհանուր իրավիճակը, նոր գիւնատեսակներու ապահովման գծով տարուող աշխատանքները, Սուրիա մարդասիրական առաքելութեան նպատակը, բանակէն ներս

Շար.ը էջ 4

Գոնկրեսականներ Կոչ Կ'ընեն Հայաստանի Եւ Արցախի Աջակցութիւնը Բարձրացնելու 100 Միլիոն Տոլարի

ԱՄՆ Գոնկրէսի 35 անդամներ միացած են Հայկական հարցերով խումբի համանախագահ Ֆրենք Փալոնի նախաձեռնութեան եւ կոչ ըրած են աջակցելու՝ 2020 տնտեսական տարուան Հայաստանի եւ Արցախի օգնութիւնը բարձրացնել 100 միլիոն տոլարի:

Թրամփի վարչակազմը Գոնկրէսին ներկայացուցած տարեկան պիւտձէի նախագծով Հայաստանին նախատեսած է յատկացնել միայն 6.75 միլիոն տոլար օգնութիւն:

Նախապէս Ֆրենք Փալոն առաջարկած էր աջակցիլ Արցախին 6 միլիոն տոլարի օգնութեան փաթեթին՝ աւարտելու համար ականազերծման եւ հաշմանդամներու վերականգնման ծրագրերը, 4 միլիոն տոլար Ռոյսի եւ Էնկէլի առաջարկներու առաջ մղման համար, 60 միլիոն տոլարի տնտեսական օգնութիւն Հայաստանին, 10 միլիոն տոլար ռազմական օգնութիւն եւ 20 միլիոն տոլար Հայաստանին՝ փախստականներուն օգնութիւն ցոյց տալու համար:

Գոնկրէսականները նաեւ կոչ ըրած են դարձեցնել Ատրպէյճանին ռազմական օգնութեան ցուցաբերումը:

ՎԱՅԱՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Ով է Մեղաւոր, որ Չարիքի Արմատներն Անցեալում Եմ

Մարտի 1-ի ամբողջական բացառապատմանն ուղղուած քայլերին զուգահեռ կարծես թէ ուր-ուազօժուած է նաեւ 1998թ. նախագահական ընտրութիւնների կեղծման գործի ուսումնասիրութիւնը (յամենայն դէպս՝ Վահան Շիրխանեանն արդէն պաշտօնապէս բացատրութիւններ է տալիս), ու չի բացառուում, որ առաջիկայում նոր գարգացումներ լինեն նաեւ Հոկտեմբերի 27-ի բացառապատման ուղղութեամբ: Սա, բնականաբար, խիստ անհանգստացրել է որոշակի քաղաքական շրջանակների, ուրիշներին էլ առիթ է տուել դատութիւնները անելու, թէ իշխանութիւնները չգիտեն՝ ինչպէս առաջ շարժուել (առաջ տանել երկիրը), ու ստիպուած՝ անցեալն են փորփորում:

Ի՞նչ է տեղի ունենում իրականում: «Երկիրն առաջ տանելը» նախ եւ առաջ տնտեսական զարգացումն է, մեր դէպքում՝ տնտեսական նոր մոդելի ներդրումը կամ «տնտեսական յեղափոխութիւնը»: Խորհրդարանում ունեցած իր ելույթում վարչապետ Փաշինեանը բաւականին հանգամանօրէն ներկայացրեց, թէ կառավարութիւնը կոնկրետ ինչ քայլեր է ձեռնարկել նոր մոդելի ներդրման ուղղութեամբ, օրինակ, գիւղատնտեսութեան ոլորտում, եւ կարելի է չկասկածել, որ այդ քայլերը շատ արդիւնաւէտ են լինելու: Բայց

կոնկրետ ոլորտներն ու տնտեսական չոր ցուցանիշները մի կողմ թողնենք: Մեծ հաշուով՝ գաղափարն այն է, որ տնտեսական յեղափոխութիւնը հնարաւոր է իրականացնել միայն տնտեսութեան մէջ ներառական մեխանիզմների կիրառմամբ: Այսինքն՝ պարզ ասած, պէտք է ամէն ինչ անել, որ համախառն արդիւնքի ստեղծմանը մասնակցեն առաւելագոյնս մեծ թուով մարդիկ: Եւ պետութիւնը պատրաստ է իր սուղ միջոցներից լուրջ գումարներ յատկացնել դրա համար:

Բայց տնտեսական նոր մոդելի արմատաւորումը հնարաւոր է միայն քաղաքական նոր մոդելի պայմաններում, այսինքն՝ քաղաքական մոդելը նոյնպէս պիտի լինի ներառական: Տեսէ՞ք՝ նախկինում Հայաստանում քաղաքական որոշումների կայացման վրայ ազդեցութիւն ունէր առաւելագոյնը մի քանի տասնեակ մարդ (հէնց նրանք էլ որոշում էին, ասենք, քաղաքական ուժերի յարաբերակցութիւնը խորհրդարանում, բիզնես-փոտոները եւ այլն), իսկ շարքային քաղաքացիներն ընդամենը դեկորացիայի դեր էին կատարում: Ու պատահական չէ, որ տնտեսութեան առիւծի բաժինն ու ազգային հարստութեան մօտ կէսը պատկանում էին մօտաւորապէս այդ նոյն մի քանի տասնեակ ընտանիքներին: Քաղաքական յեղափոխութիւնը

Քաղաքական յեղափոխութիւնը հնարաւոր դարձաւ միայն այն ժամանակ, երբ հարիւր հազարաւոր քաղաքացիներ հրաժարուեցին «դեկորացիայի» դերից եւ որոշեցին անմիջական մասնակցութիւն ունենալ քաղաքական որոշումների կայացման վրայ: Նոյն մեխանիզմով էլ տնտեսական յեղափոխութիւնն է իրականութիւն դառնալու, եւ յաջողութեան առաջին օրինակներն արդէն կան:

Մնում է, որ քաղաքական հին մոդելին վերադառնալը բացառուի վերջնականապէս: Իսկ դրա համար անհրաժեշտ է մինչեւ վերջ բացառապէս այդ հին մոդելի էութիւնն ու հասկանալ, թէ ինչպէս է կայացել այն (ընտրակեղծիքներ, ժողովրդի նկատմամբ բռնութիւններ, քաղաքական սպանութիւններ եւ այլն): Պարզ ասած՝ պէտք է բացառապէս արմատները: Իսկ արմատներն անցեալում են: Ընդ որում, անհրաժեշտ ենք համարում յատուկ ընդգծել՝ պէտք է բացառել ոչ թէ նախկին պաշտօնեաների՝ Ռոբերտ Քոչարեանի կամ Սերժ Սարգսեանի վերադարձը (դա այս-

պէս թէ այնպէս բացառուած է՝ հաշուի առնելով նրանց նկատմամբ հասարակութեան վերաբերմունքը), այլ քաղաքական հին մոդելի վերականգնումը՝ անկախ նրանից, թէ ում դէմքով կը լինի դա: Այո, դա կարեւորագոյն քաղաքական խնդիր է: Բայց դա չի նշանակում, թէ «անցեալը փորփորելը» քաղաքական հետապնդում է: Պարզապէս նախկինում կատարուած ընտրակեղծիքների բացառապատմումը կը բացառի դրանց կրկնութիւնն ապագայում, ժողովրդի դէմ ուժ կիրառողների բացառապատմումը կը բացառի յետագայում նոյն մեթոդների օգտագործումը որեւէ իշխանութեան կողմից, նախկինում թալանուած վերադարձները կանխարգելիչ նշանակութիւն կ'ունենայ յետագայի համար, եւ այլն:

Այլ կերպ ասած՝ ստացում է, որ տնտեսական յեղափոխութիւնը միտուած է ապագային, եւ այդ հարցում իշխանութիւնները պիտի միայն առաջ նայեն, իսկ անա տնտեսական յեղափոխութեան քաղաքական բաղադրիչն ապահովելու համար «անցեալը փորփորելն» անխուսափելի է: Ու դա, մեծ հաշուով, նոյնպէս միտուած է ապագային:

Որովհետեւ առանց մէկի միւսը պարզապէս չի ստացուի:
«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

Ինչ են խօսել Փաշինեանն ու Պուտինը «Վեստիում» Քոչարեանի Ներկայութեան Մասին

Նիկոլ Փաշինեանը հեռախօսազրոյց է ունեցել ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հետ, որի ընթացքում նրան է ներկայացուել նաեւ Վիեննայում Ալիեւի հետ տեղի ունեցած հանդիպման մանրամասները: Պուտինի հետ Փաշինեանի հեռախօսազանգը յատկապէս ուշագրաւ է մի նրբերանգի պարագայում: Վիեննայի հանդիպումից առաջ ռուսական իշխանական շրջանակներին, իսկ որոշ դէպքերում ուղղակի պետական պատկանելութեան հեռուստաալիքներով ուղղակի քարոզչական արշաւ էր Հայաստանի դէմ, մասնաւորապէս Նիկոլ Փաշինեանի դէմ, որին այդ արշաւի հեղինակները մեղադրում էին Ռոբերտ Քոչարեանի դէմ «քաղաքական վրէժի» համար, նրան «քաղաքական վրէժի» դարձնելու համար: Հայաստանի իշխանութեան դէմ այդ գրոհը եղել է կրեմլի «հեռախօսազանգով», թէ՞ ոչ:

Բանն այն է, որ այդ ալիքը Հայաստանում դիտուել է իբրեւ Վիեննայից առաջ Հայաստանի դէմ Ռուսաստանի ճնշման դրսեւորում: Այդպէս էր դա, թէ՞ ոչ: Պաշտօնական Երեւանը չի արձագանքել ռուսական մեղադատությունում տարածուած այդ քարոզչական քայլերին: Իսկ Պուտինի հետ գրոյցում Նիկոլ Փաշինեանն այդ մասին խօսել է: Միւս կողմից, կարող ենք արդեօք դիտարկել տարբերակ, որ Մոսկուան ունի ակնկալիք, որ այդօրինակ քայլերի միջոցով Նիկոլ Փաշինեանին «խօսեցնի», իսկ Երեւանն էլ, ըստ այդմ, իր լուրթեամբ առաջին հայեացքից անարձագանք է թողնում ՌԴ իշխանական հեռուստաալիքներով փաստացի իր դէմ արուող քարոզչութիւնը, սակայն

խորքային առումով պարզապէս չի արդարացնում Մոսկուայի ակնկալիքը: Թէ՞ այդուհանդերձ այդ ալիքը առնչութիւն չունէր Վիեննայի հանդիպմանը, եւ զուցէ կրեմլից հրահանգուած էլ չէր, այլ պարզապէս կրեմլը չի խանգարել Հայաստանի իշխող նախկին համակարգի, մասնաւորապէս Քոչարեանի շրջանակին տեղեկատուական ալիք պատուիրել ռուսական իշխանական մեղադատում:

Այդպիսով կրեմլը կարող է լուծել երկու հարց՝ մի կողմից ապահովել այդ մետոյալի համար լրացուցիչ ֆինանսաւորում, միւս կողմից էլ դա օգտագործել Հայաստանի նոր իշխանութեան վրայ ազդեցութեան համար, եթէ, իհարկէ, այն աշխատի: Աշխատում է, թէ՞ ոչ, սա է հարցը: Պէտք է ենթադրել, որ չի աշխատում, հակառակ պարագայում ալիքը չէր լինի, եւ նոր իշխանութիւնը կը պայմանաւորուեր Ռուսաստանի հետ ինչ-ինչ հարցեր, պայմանով, որ չի լինի տեղեկատ-

ուական ալիք իր դէմ: Եթէ այն կայ, դա նշանակում է, որ կայ դիմադրութիւն, եւ Ռուսաստանի իշխանութեան մօտ էլ կայ այն յղթահարելու խնդիր, այլապէս ազդեցութիւնը կը բանեցուէր այլ՝ աւելի ուղիղ խողովակներով, քան տեղեկատուա-քարոզչական ալիքը: Միւս կողմից պէտք է բացառել եւ այն, որ դա ընդամենը Պուտինի «շնորհ» է իր հայաստանեան «ընկերներին», այսպէս ասած, բարոյական ժեստ քաղաքական առումով «գլուխն ազատելու» համար, քանի որ այդ «ազատութիւնը» պէտք է ՌԴ առաջ ծառայած լրջագոյն ներքին ու արտաքին խնդիրների լուծման կամ չէզոքացման համար: Իսկ այդ հարցում, ինչքան էլ տարօրինակ չհնչի, աւելի ու աւելի մեծ նշանակութիւն է ստանալու ինքնիշխան Հայաստանը, որքան էլ գոլտ հոգեբանօրէն կրեմլի համար դժուար լինի դա ընկալելն ու պատկերացնելը:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ՎԱՄԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՎԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
(626) 797-7680

ՄԱՍԻՍ
 ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
 ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104
 Phone: (626) 797-7680
 Fax: (626) 797-6863
 E-Mail: massis2@earthlink.net
 http://www.massisweekly.com
 (USPS 667-310) (ISSN 0744-334X)
 Published Weekly
 Except Two Weeks in August
 ANNUAL SUBSCRIPTION RATES:
 USA \$50.00, \$100.00 (First Class)
 Canada \$125.00 (Air Mail)
 Overseas \$250.00 (Air Mail).
 All payments must be made in US funds & Drawn on US banks.
 Periodicals Postage Paid at Pasadena CA.
 Please Send Address Change To MASSIS WEEKLY

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հայկ Մարութեան. Երեւանի «Իւդոտ» Հողատարածքները Նախկին Բարձրաստիճան Պաշտօնեաները Գնած են Շատ Ցած Գիներով

«Իւրաքանչիւր վարչական շրջանում կան հողատարածքներ՝ չակերտաւոր իւրոտ տարածքներ, որոնք շատ ցածր գններով գնուել է թաղապետերի կողմից կամ իրենց մերձաւորների կողմից, եւ ցաւօք սրտի, արդէն գրանցուած են, իրենք սեփականութեան վկայականներ ունեն եւ այլն: Եւ այսօր կան ծրագրեր, որ մենք ուզում ենք իրականացնել, եւ իրականացմանը խանգարում է այդ հանգամանքը»:



Երեւանի քաղաքապետ Հայկ Մարութեան

«Բայց մենք բանակցում ենք նաեւ այդ մարդկանց հետ, որպէսզի, եթէ որեւէ հողակտոր մեզ պէտք է որեւէ ծրագրի համար, իրենք զիջեն էր հողը մեզ, մենք իրենց համանման հող մի ուրիշ տեղ տանք: Ցաւը նրանում է, որ սեփականաշնորհուել են նաեւ այգիների տարածքները, որը ամենադաժանն է», - աւելցրեց քաղաքապետ Հայկ Մարութեան:

մերժում ստացած են, ինչին յաջորդած է իրաւական գործընթաց: Պատկան մարմինները այժմ կ'ուսումնասիրեն այդ հողատարածքներու ձեռք բերման հիմքերու օրինականութիւնը:

Նախկին քաղաքապետ Տարօն Մարգարեանին պատկանող ահաբեկի ունեցուածքի, տարածքներու մասին ալ հետաքրքրուած են լրագրողները: Արդեօ՞ք պարզած են՝ թէ քաղաքապետի պաշտօնին այդ հարստութիւնը օրինակա՞ն ճանապարհով ձեռք բերած է:

Վարչապետ Նիկոլ Փաշինեանը վերջին ասուլիսի ժամանակ խօսած էր այս խնդրի մասին՝ ըսած էր, որ Հայաստանի համայնքներուն մէջ, ինչպէս նաեւ Մեղրիի ազատ տնտեսական գոտիի հողատարածքները նախկին բարձրաստիճան պաշտօնեաները սեփականաշնորհած են ծիծաղելի ցած գիներով, եւ այժմ ներդրողներուն կը փորձեն վաճառել քանի մը անգամ թանկ:

«Դրանով զբաղւում են քննչական մարմինները եւ այլ մարմիններ: Մենք զբաղւում ենք մեր գործով», - պատասխանած է Հայկ Մարութեանը:

Փաշինեանը ըսած էր, որ յորդորած են սեփականատէրերուն անոնք վերադարձնել պետութեան, սակայն

Վաղարշակ Յարութիւնեան. Ռոպերթ Քոչարեանը Ատրպէյճանցիներուն Հետ Բանակցած է Մեղրիի Լաչինի Հետ Փոխանակելու Տարբերակը

Ըստ Հայաստանի պաշտպանութեան նախկին նախարար Վաղարշակ Յարութիւնեանի, Հայաստանի երկրորդ նախագահ Ռոպերթ Քոչարեանը ատրպէյճանցիներուն հետ բանակցած է Մեղրիի Լաչինի հետ փոխանակելու տարբերակը:



Պաշտպանութեան նախկին նախարար Վաղարշակ Յարութիւնեան

«Ազատութեան» ռատիոյի հետ հարցազրույցի ժամանակ Յարութիւնեանը ըսած է՝ «կու գալ ժամանակը եւ կարող է նաեւ փաստաթուղթ ներկայացնել»:

դրական տարբերակ է եւ կ'ապահովի Հայաստանի զարգացումը: Ինչին, բնական է, եւ առարկութիւններ են ունեցել, ասել են, որ սա տարբերակ է... բայց մանրամասներին չեն ուզում այսօր անդրադառնալ: Հիմնականում սա է եղել: Բացի դրանից եւ նաեւ Հոկտեմբերի 27-ից յետոյ մասնակցել են բանակցութիւնների, երբ որ կարելի է ասել դիակները դեռ չէին սառել, համանախագահները հանդիպել են իմ հետ եւ այդ տարբերակը ներկայացրել են: Եղել են բանակցութիւններ, որտեղ նոյնպէս եւ ասել են, որ «այս տարբերակը չի ապահովում Հայաստանի անվտանգութիւնը», որից յետոյ եւս մէկ անգամ հանդիպում է եղել համանախագահների հետ, որտեղ նոյնպէս եւ դա բացատրել են»:

«Քանի որ այս հարցը շատ հրատապ է այսօր, եւ հասարակութիւնն ուզում է իմանալ սրա մասին եւ Անդրանիկ Քոչարեանը շատ յստակ դա ներկայացրեց՝ այո՛, այդպիսի փաստ տեղի ունեցել է, եւ սրա մասին խօսել են նաեւ 2001 թուականին, բայց ներկայացնեմ, թէ ինչպէս է դա եղել՝ երբ, որ ես նշանակուել են պաշտպանութեան նախարար, Վազգէն Սարգսեանն ինձ ամբարանոցում դուրս է հրաւիրում, մենք նստած էինք իր կառավարական ամբարանոցում, եւ ներկայացրեց, որ այսպիսի տարբերակ կայ, ներկայացրում է, եւ ասաց՝ «ես խնդրում եմ սրա մասին ոչ մէկին մի ասա, որ ես քեզ դա ասել եմ»: 1999 թուականի Յուլիս ամսին, մինչեւ Հոկտեմբերի 27-ը, մենք հանդիպում ենք Սադարակուն՝ Քոչարեանն ու ես, Ատրպէյճանի պաշտպանութեան նախարարը եւ Հէյտար Ալիեւը եւ այնտեղ այդ հարցը քննարկում է, որից յետոյ Քոչարեանն ինձ հրաւիրում է իր աշխատասենեակ եւ այնտեղ ներկայացնում է այդ տարբերակը, ներկայացնում է, որ սա

10 Տոկոսով Պիտի Բարձրանայ Ձինձառայողներու Եւ Ուսուցիչներու Աշխատավարձը

«2019 թուականի պետական պիւտճէի եկամտային մասը կը գերակատարենք առնուազն 40 միլիարդ դրամով: Սա մօտաւորապէս 90 միլիոն տոլար է», - Ազգային ժողովի մէջ կառավարութեան ծրագրի կատարման ընթացքի եւ արդիւնքներու մասին զեկոյցը ներկայացնելու ժամանակ յայտարարած է վարչապետ Նիկոլ Փաշինեանը:

եան իր էջին գրած է վարչապետ Նիկոլ Փաշինեանը՝ Պետական եկամուտներու կոմիտէի (ՊԵԿ) նախագահ Դաւիթ Անանեանի հետ հանդիպումէն ետք ամփոփելով արդիւնքները:

Այսինքն, ըստ վարչապետի, պետական եկամուտները 2019 թուականին պիտի ըլլան առնուազն այսքանով աւելի, քան նախատեսուած է Ազգային ժողովի կողմէ ընդունուած պետական պիւտճով:

«Ուշադրութիւն դարձրէք, որ մեր պիւտճէի պահուստային ֆոնտը 9,4 միլիարդ դրամ է՝ ողջ տարուայ համար: Այսինքն՝ առաջին եռամսեակում մենք պահուստային ֆոնտը 2 միլիարդ դրամով գերազանցող գերակատարում ենք ունեցել», - գրած է վարչապետը՝ շարունակելով. - «Առաջին եռամսեակում տնտեսվարողներին է վերադարձուել 26,4 միլիարդ դրամ, ինչը նախորդ տարուայ նոյն ցուցանիշը գերազանցում է 7,4 միլիարդ դրամով»:

«Սա ուզում եմ ընդգծել, որ վերջին 9 տարիների համար աննախադէպ երեւոյթ է: Մենք մտադրուած ենք 2019 թուականի Յուլիսի 1-ից 10 տոկոսով բարձրացնել Հայաստանի Հանրապետութեան գինուած ուժերի գինձառայողների աշխատավարձն, իսկ 2019 թուականի սեպտեմբերի 1-ից նոյն չափով բարձրացնել Հայաստանի Հանրապետութիւնում հանրակրթական դպրոցներում աշխատող ուսուցիչների աշխատավարձը՝ մօտաւորապէս 38 հազար ուսուցչի մասին է խօսքը: Բացի այս մենք ծրագրում ենք այս տարի իրականացնել շուրջ 303 քիլոմետր ճանապարհների տարբեր մակարդակի նորոգումներ՝ հիմնանորոգում, ընթացիկ նորոգումներ, ինչը նոյնպէս աննախադէպ ցուցանիշ է վերջին 9 տարիների համար», - ըսած է վարչապետը:

Վարչապետը նշած է, որ 2019 թուականի մարտին նախորդ տարուայ մարտի համեմատ տպագրուած է 8 միլիոն 361 հազար 119 հատ աւելի Հսկիչ-դրամարկղային մեքենայի (ՀԴՄ) կտրոն: 2019 առաջին եռամսեակին նախորդ տարուայ առաջին եռամսեակի համեմատաւելի տպագրուած ՀԴՄ կտրոններու թիւը 20 միլիոն 710 հազար 114 հատ է:

«ՊԵԿ բողոքարկման յանձնաժողովն առաջին եռամսեակում լսել է 506 բողոք, որից 288-ը, այսինքն՝ կէսից աւելին՝ բաւարարուել է (նախորդ տարի նոյն ժամանակահատուածում լսուել էր 152 բողոք, բաւարարուել էր 78-ը): Այս վիճակագրութիւնը ոչ միայն վկայում է հարկային մարմինների եւ գործարար միջավայրի փոխվստահութեան աճի մասին, այլեւ էականօրէն բեռնաթափում է դատական համակարգը», - գրած է վարչապետը:

Պետական պիւտճէի հաւաքագրումներու ծրագիրը առաջին եռամսեակին գերակատարուած է 11,4 միլիարդ դրամով, ֆէյսպուք-

Առողջապահութեան Փոխնախարարը Ձերբակալուած է Մեծ Քանակութեամբ Կաշառք Ստանալու Կասկածանքով

Ազգային անվտանգութեան ծառայութիւնը (ԱԱԾ) հաղորդագրութիւն տարածած է, որուն մէջ կը հաղորդէ առողջապահութեան փոխնախարար Արսէն Դաւթեանի-ձերբակալութեան մասին եւ որոշ մանրամասներ կը ներկայացնէ:

Լորման աշխատանքները համակարգող փոխնախարարի հովանաւորչութիւնը եւ նրա հետ ձեւաւորել իր համար բարենպաստ աշխատանքային պայմաններ: Վերաբաշխման արդիւնքում պետպատուէրի շրջանակներում տարբեր ծրագրերով յատկացուելիք գումարներով կազմակերպութեան ֆինանսաւորման պակասը լրացնելու համար 2019 թուականի Մարտի 30-ին առողջապահութեան նախարարի տեղակալին վերջինիս աշխատասենեակում որպէս կաշառք անձամբ տուել է առանձնապէս խոշոր չափերով գումար, որի փոխանցումն իրականացուել է ՀՀ ԱԱԾ աշխատակիցների վերահսկողութեան ներքոյ:

Հաղորդագրութեան մէջ ըսուած է՝ «Ազգային անվտանգութեան ծառայութեանն օրէնքով վերապահուած հանցաւորութեան դէմ պայքարի եւ կաշառակերութեան հակազդմանն ուղղուած գործառնոյթների իրականացման արդիւնքում, տուեալներ են ստացուել ՀՀ առողջապահութեան նախարարութեան ղեկավար աշխատողին առանձնապէս խոշոր չափերով կաշառք տալու վերաբերեալ: Ձեռնարկուած լայնածաւալ հետախուզական միջոցառումների եւ համալիր քննչական գործողութիւնների արդիւնքում ձեռք են բերուել փաստական տուեալներ այն մասին, որ բժշկական հաստատութեան սնօրէնը նպատակ է ունեցել ապահովել առողջապահութեան նախարարութեան կողմից բուժհաստատութիւններին տրամադրուող ֆինանսա-

Նոյն օրը բերման ենթարկուած փոխնախարարը ձերբակալուած է՝ առանձնապէս խոշոր չափերով կաշառք ստանալու կասկածանքով, իսկ կաշառք տալու մէջ կասկածուող անձի նկատմամբ, հաշուի առնելով վերջինիս տարիքը եւ առողջական վիճակը, որպէս խափանման միջոց կիրառուած է ստորագրութիւն՝ չհեռանալու մասին, կը փոխանցէ ԱԱԾ-ն:

ԼՈՒՐԵՐ

Փենթագոնը Նոր Խոչընդոտներ Կը Յարուցէ Թուրքիոյ F-35 Օդանաւերու վաճառքի Հարցով

Պաշտօնական Ուաշինգթոնը կոշտ քայլերու կը դիմէ՝ փորձելով ստիպել Անգարային հրաժարիլ ուսական արտադրութեան S-400 զենիթահրթիռային համակարգերու ձեռքբերումէն:

«Reuters» գործակալութեան տեղեկութիւններով՝ Միացեալ Նահանգներու պաշտպանութեան նախարարութիւնը դադարեցուցած է ամերիկեան նորագոյն F-35 ռազմական օդանաւերու՝ Թուրքիոյ մատակարարման գործընթացի շրջանակէն ներս յարակից սարքավորումներու առաքումը:

Գործակալութեան տեղեկութիւններով՝ խօսքը շարք մը կարեւոր համակարգերու մասին է, որոնց բացակայութիւնը F-35 օդանաւերու սպասարկումը Թուրքիոյ կողմէ գործնականօրէն անհնար կը դարձնէ:

Խնդրին քաջածանօթ անանուն շարք մը աղբիւրներ «Reuters»-ին փոխանցած են, որ խօսքը օդաչուներու վարժանքներուն համար նախատեսուած, այսպէս կոչուած, յատուկ նմանակներու մասին է, որոնց օգնութեամբ Թուրք օդաչուները պէտք է սորվին



Կառավարել F-35-ները:

Նորագոյն արհեստագիտութիւններու հիման վրայ ստեղծուած առաջին երկու F-35 օդանաւերը Թուրքիոյ յանձնելու որոշումը կայացած էր դեռ նախորդ տարուան Յունիսին: Այդ օդանաւերը, սակայն, այժմ կը գտնուին ԱՄՆ Արիզոնա նահանգին մէջ, ուր անոնցմով վարժանքներ կ'իրականացնեն Թուրք օդաչուները:

Այս պահուն, փաստօրէն, թրքական բանակը դեռ ի վիճակի չէ ինքնուրոյնաբար շահագործել կամ տնօրինել այդ օդանաւերը:

Փենթագոնի տեղեկութիւններով՝ օդանաւերը Թուրքիա պէտք է առաքուին Նոյեմբեր ամսէն ոչ շուտ:

ՏԻՄ Ընտրութիւններուն Թուրքիոյ Իշխանական Կուսակցութիւնը Պարտուած է Երկրի Գլխաւոր Երեք Քաղաքներուն Անգարայի, Իզմիրի եւ Պոլսոյ Մէջ

31 Մարտին Թուրքիոյ մէջ տեղի ունեցած տեղական ինքնակառավարման մարմիններու (ՏԻՄ) ընտրութիւններուն նախագահ Ռեճէպ Թայյէպ Էրտողանի «Արդարութիւն եւ զարգացում» կուսակցութիւնը թէեւ յաղթած է ընդհանուր ընտրութիւններուն, սակայն պարտուած է մայրաքաղաք Անգարայի, ինչպէս նաեւ երկրի խոշորագոյն քաղաքին՝ Պոլսոյ մէջ:

Անգարայի եւ Իզմիրի մէջ յաղթած են Թուրքիոյ ընդդիմութեան ներկայացուցիչները: Պոլսոյ քաղաքապետի պաշտօնին համար պայքարը թէժ է, կը հաղորդէ Reuters-ը:

Անգարայի քաղաքապետի համար ընտրութիւններուն՝ քուէներու 99,8 տոկոսի հաշուարկէն ետք պարզուած է, որ յաղթած է ընդդիմադիր թեկնածու Մանսուր Եաւաշը, որուն օգտին քուէարկած է ընտրողներու 50,9 տոկոսը: Արդարութիւն եւ զարգացում կուսակցութեան (ԱԿՔ) փոխնախագահ Մեհմէտ Օզհասեքին ստացած է քուէներու 47,4 տոկոսը:

Պոլսոյ մէջ քուէներու 98,8 տոկոսի հաշուարկի արդիւնքով դեռ յաղթող թեկնածու չկայ: Ռեճէպ Թայյէպ Էրտողանի մտերիմ դաշնակից եւ Թուրքիոյ նախկին վարչապետ Պինար Երլարըմը ընդդիմութեան թեկնածու Աքրամ Իմամօղլունէն 4000 ձայնով աւելի է, սակայն Իմամօղլուն ալ յայտարարած է, որ Երլարըմէն առաջ է 28 հազար ձայնով:

Իր ելոյթին մէջ Էրտողանը խոստովանած է, որ իշխող կուսակցութիւնը չէ ունեցած Անգարայի քաղաքապետի պաշտօնը, այնուամենայնիւ, ան նշած է, որ ԱԿՔ-ի թեկնածուները յաղթած են Անգարայի շուրջ գտնուող շատ տարածքներու մէջ:

Կը նշուի, որ իշխող կուսակցութիւնը յաղթանակ տարած է Թուրքիոյ 40 շրջաններու մէջ, գլխաւոր ընդդիմադիր Ազգային ժողովրդական կուսակցութիւնը՝ 20 մարզերու մէջ (ներառեալ Անգարա, Իզմիր, Անթալիա), իսկ ազգայնական կուսակցութիւնը՝ 12:

Պաշտպանութեան Նախարարի Խորհրդական

Շարունակուած էջ 1-էն

տեղի ունեցող փոփոխութիւնները, գինուորականներու կենցաղային պայմաններու բարեփոխման ուղղուած քայլերը եւ գինուորական նոր եւ գերարդիական հիւանդանոցի կառուցման ծրագիրը:

Ապա, Պր. Բշտիկեան պատասխանեց իրեն ուղղուած հարցերուն, որոնք կը վերաբերէին Ար-

ցախեան հարցի վերջին զարգացումներուն, բանակցային գործընթացներուն ու նաեւ Հայաստանեան մամուլէն ներս լոյս տեսնող եւ պաշտպանութեան նախարարութեան ու բանակին վերաբերող որոշ լուրերուն ու քննադատութիւններուն:

Պր. Բշտիկեան բոլոր հարցերուն տուաւ սպառիչ պատասխաններ եւ լուսաբանութիւններ:

Քառօրեայ Պատերազմի Երրորդ Տարեկիցն Առօրէ Փաշինեան Այցելեց Եռաբլուր



Փաշինեան ծաղիկներ կը զետեղէ Ապրիլեան պատերազմի զոհերու գերեզմանին

Ապրիլ 2-ին, քառօրեայ պատերազմի տարեկիցի կապակցութեամբ Եռաբլուր գինուորական պանթէոն այցելեցին զոհուածներու հարազատներն ու բարձրաստիճան պաշտօնեաները՝ վարչապետ Նիկոլ Փաշինեանի գլխաւորութեամբ:

Վարչապետը լրագրողներու հարցերուն կարճ պատասխանած է: Նախ ապրիլեան պատերազմին քաղած դասերու մասին. - «Ես ասել եմ նախկինում, որ այսօր էլ այդ խնդիրը իմ օրակարգում է եւ կառավարութեան օրակարգում է, որ մենք պէտք է խորութեամբ եւ լրջութեամբ հասկանանք, թէ ինչ է տեղի ունեցել, եւ հետեւութիւններ անել»:

Վարչապետը անդրադարձած է նաեւ Պաշտպանութեան նախարարի աղմկայարոյց յայտարարութեան: Դաւիթ Տոնոյեանը օրերս Նիւ Եորքի հայ համայնքի հետ հանդիպման ժամանակ դարաբաղեան խնդրի կարգաւորման մասին խօսելու ժամանակ ըսած էր հետեւեալը. - «Տարածքներ խաղաղութեան դիմաց ձեւաչափը ես այսօր վերաձեւակերպել եմ, մենք հակառակն ենք անում՝ նոր պատերազմ, նոր տարածքների դիմաց»:

Հարցին, թէ արդեօք Հայաստանը կը փոխէ հետորաբանութեան

թիւնը, վարչապետը պատասխանած է. - «Դաւիթ Տոնոյեանի յայտարարութեան շուրջ աղմուկը անիմաստ է: Որովհետեւ, ճիշդն ասած, եթէ Դաւիթ Տոնոյեանն այլ յայտարարութիւն անէր, ես նրան կ'ազատէի Պաշտպանութեան նախարարի պաշտօնից: Ի՞նչ է ասել պաշտպանութեան նախարարը: Ասել է՝ եթէ յանկարծ պատերազմ լինի, մեր ձգտումը պէտք է լինի յաղթել այդ պատերազմում: Եթէ յանկարծ Պաշտպանութեան նախարարը որեւէ այլ բան մտածի, ինքը պէտք է Պաշտպանութեան նախարար չաշխատի: Սա որեւէ կերպ ստուեր չի գցում խաղաղ կարգաւորման գործընթացի վրայ, ընդհակառակը՝ շեշտում է խաղաղ կարգաւորման գործընթացի կարեւորութիւնը»:

Նիկոլ Փաշինեանը մէկ տարի առաջ, երբ ընդդիմադիր պատգամաւոր էր քառօրեայ պատերազմի մեղաւորներուն անդրադառնալով՝ պնդած էր, որ ապրիլեան պատերազմը պատշաճ քննութեան չէ արժանացած, եւ այդ մէկը լուրջ խնդիր է: Ըստ անոր, ռազմական հետախուզութիւնը ամենօրեայ ռեժիմով ահազանգեր հնչեցուցած է, սակայն անոնց պատշաճ արձագանգի չէ արժանացուցած գինուորական եւ քաղաքական իշխանութիւնը:

Le Figaro. Յեղասպանութեան Ժխտումը Կրնայ Դատապարտուիլ Ֆրանսայի Մէջ

Հայերու ցեղասպանութեան ժխտումը կրնայ դատապարտուիլ Ֆրանսայի մէջ. Ֆրանսայի վերաքննիչ դատարանը նախօրէին արդարացուցած է Nouvelles d'Armenie կայքի տնօրէնը, որուն դէմ հայց ներկայացուցած էր 1915-ի հայերու ցեղասպանութիւնը ժխտող պատմաբանը: Այս մասին կը գրէ Ֆրանսական Le Figaro-ն:

Նշուած է, որ իրավիճակը կրնայ հակասական թուիլ. Ֆրանսան ճանչցած է Հայոց ցեղասպանութիւնը 2001-ին, սակայն Սահմանադրական խորհուրդը 2012-ին դատապարտեց ժխտողականութեան քրէականացման օրէնքը՝ այն համարելով հակասող արտայայտման ազատութեան:

Այսպիսով, հետագոտող Մաքսիմ Կոչանը, որուն կը ֆինանսաւորէ թրքական թիւք-թիւքը, դատի տուած էր Nouvelles d'Armenie կայքի տնօրէն Արա Թորանեանին եւ հեղինակ Սամուէլ Թիւլպիանին՝

կայքին մէջ հրապարակուած «վիրաւորական ու զրպարտչական» նիւթերու պատճառով ու փոխհատուցում կը պահանջէր:

Խօսքը կը վերաբերի 2013 եւ 2014-ի հրապարակումներուն, ուր Մաքսիմ Կոչան համեմատուած է Հոլոքոսթը մերժող ժխտողական Ռոպերթ Ֆորիսընի հետ ու որակուած որպէս «թրքական ֆաշիզմի ծառայութեան իսկական մարիոնետ»:

Վերաքննիչ դատարանը նախօրէին ուժի մէջ թողած է առաջին ատենի դատարանի որոշումը, նշելով, որ յայտարարութիւնները արատաւոր էին, սակայն «հանրային հետաքրքրութեան» առարկայի տեսանկիւնէ եղած է «բարիւրացիական»:

Յիշեցնենք նաեւ, որ 2018-ի յայտարարուած էր, որ Ապրիլ 24-ը Ֆրանսայի մէջ պիտի նշուի որպէս Հայոց ցեղասպանութեան յիշատակման օր:

Երեւանի Զրապարակներն Սեկը Անուանակոչուեցաւ Եւրոպայի Անուամբ



Հիւսիսային պողոտայի հրապարակը այսուհետ կը կոչուի Եւրոպայի հրապարակ:

Անուանակոչման միջոցառումը նուիրուած էր Եւրոպայի խորհուրդի հիմնադրման 70-ամեակին: Մասնակիցներու շարքին էր Եւրոպայի խորհուրդի խորհրդարանական վեհաժողովի նախագահ Լիլիան Մորի Փասքիէն:

«Խորհրդանշական է, որ հրապարակի անուանակոչութեան միջոցառումը կը համընկնի Եւրոպայի խորհուրդի 70-ամեակի հետ, որու լիբրալ անդամն է Հայաստանը», - ելոյթը այս խօսքերով սկսած է ԵՄԽՎ նախագահ Լիլիան Մորի Փասքիէն:

«Ես կրնամ բազմաթիւ օրինակներ բերել այն խոշոր նուաճումներու մասին, որոնք Եւրոպայի խորհուրդը արձանագրած է կեանքի բազմազան ոլորտներուն մէջ տասնամեակներու ընթացքին», - նշած է ԵՄԽՎ նախագահը՝ աւելցնելով, որ պէտք է սահմանափակուիլ այդ ձեռքբերումներով եւ կանգ առնել: - «Ինծի համար Եւրոպան, բացի աշխարհագրական տարածք ըլլալէ, միլիոնաւոր եւրոպացիներու բնակավայրն է, որոնք կը խօսին տարբեր լեզուներով, բայց անոնց կը միաւորեն նոյն արժէքները եւ անոնք կ'առաջնորդուին նոյն օրէնքներու դրոյթներով»:

Հրապարակի անուանակոչման

հանդիսաւոր արարողութեան մասնակցած էին նաեւ Հայաստանի մէջ հաւատարմագրուած օտարերկրեայ դիւանագիտական առաքելութիւններու ղեկավարներ:

«Հայաստանում ժողովրդավարական հիմնարկների կայացման գործում էական դեր ունի Եւրոպայի խորհուրդը», - իր ելոյթին մէջ նշած է Ազգային ժողովի փոխնախագահ Ալեն Սիմոնեանը: - «Այսօր արդէն կարող ենք հաստատակամօրէն ասել, որ մենք յաջողել ենք: Սրա մասին է վկայում այս տարի առաջին տարեդարձը բոլորով թաւշեայ յեղափոխութիւնը, որը համազգային, բայց նաեւ համամարդկային ձեռքբերում է»:

«Եւրոպայի խորհուրդը աշխարհին տուեց երեք հիմնասիւների վրայ խարսխուած արժեհամակարգ՝ մարդու իրաւունքներ, ժողովրդավարութիւն եւ իրաւունքների գերակայութիւն: Համաեւրոպական արժէքների հիմքում մարդն է ու նրա արժանաւիպել ապրելու իրաւունքը», - ըսած է Սիմոնեանը՝ շարունակելով. - «Հենց այս արժէքների հանդէպ նուիրուածութեան սկզբունքով եւ կարողութիւնների զարգացման ու ամբարանումն ապահովել է Հայաստանը անկախութիւնից ի վեր կառուցել եւրոպական ուղղութեամբ իր յարաբերութիւններն ու համագործակցութիւնը»:

Վիեննայի Բանակցութիւնները

Շարունակուած էջ 1-էն

Սա ընդամենը բանակցային գործընթացը արդիւնաւէտ դարձնելու խնդիր է: Հիմա, օրինակ, երբ որ ատրպէյճանական կողմը ասում է, որ կարեւորն էին է, որ բանակցութիւնների ձեռնարկը մնացել է անփոփոխ, այսինքն նրանք դրանով ուզում են ասեն, որ այս բանակցութիւններում, այս քննարկումներին իրենք չաղթող են դուրս եկել: Վիեննայում արդեօք քննարկուել է Ղարաբաղի մասնակցութեան հարցը, իհարկէ քննարկուել է, արդեօք մենք լրջօրէն փաստարկել ենք այդ տեսակետը, իհարկէ լրջօրէն փաստարկել ենք, արդեօք այս հարցի վերաբերեալ կողմերը եկել են համաձայնութեան, իհարկէ չեն եկել համաձայնութեան, արդեօք սա նշանակում է, որ այդ հարցը քննարկումներից դուրս եկաւ, իհարկէ՞ ոչ, դա նշանակում է, որ այդ թեմայի շուրջ մենք քննարկումները պէտք է շարունակենք, եւ սա շատ կարեւոր է ընդհանրապէս բանակցութիւնները արդիւնաւէտ դարձնելու համար», - շեշտեց Հայաստանի

վարչապետը: Նիկոլ Փաշինեանը ընդգծած է Ղարաբաղի մասնակցութեան հարցը օրակարգ բերելով իրենք ձեռնարկի փոփոխութեան հարց չեն դրած. սա յիշեցուցած է, որ մինչեւ 1998 թուականը Ղարաբաղը ներկայացուած եղած է բանակցային գործընթացին, իսկ 1998-էն ետք ալ Հայաստանը ներկայացուցած են մարդիկ, որոնք եղած են Ղարաբաղի առաջնորդներ: «Այն փաստի բերումով, որ ես ծնունդով դարբաղցի չեմ եւ Ղարաբաղի լիտըրներին մէկը չեմ եղել իմ կենսագրութեան որեւէ փուլում, ասում է, որ, ահա, նոր հիմա Ղարաբաղը դուրս է մնացել բանակցային գործընթացից», - նշեց Հայաստանի կառավարութեան ղեկավարը: Յատենք որ, Վիեննայի մէջ նախ տեղի ունեցած էր Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի ու Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի ընդլայնուած կազմով հանդիպումը՝ երկու երկիրներու արտաքին գործոց նախարարներ Զոհրապ Մնացականեանի եւ Էլմար Մամետեարովի, ինչպէս նաեւ ԵԱՀԿ

Համաշխարհային Դրամատան Խուճրը 500 Միլիոն Տոլար Պիտի Տրամադրէ Հայաստանին

Համաշխարհային դրամատան խումբի Գործադիր տնօրէններու խորհուրդը հաւանութիւն տուած է Հայաստանի հետ 2019-2023 թուականներուն «Երկրի գործընկերութեան շրջանակին» (ԵԳՇ)՝ շուրջ 500 միլիոն ԱՄՆ տոլար՝ կայուն եւ ներառող աճին եւ երկրին մէջ կենսամակարդակի բարելաւման աջակցելու համար:

Նոր «Երկրի գործընկերութեան շրջանակ» -ը լիովին համահունչ կառավարութեան հնգամեայ ծրագրին՝ յանուն արդար, ներառական եւ քաղաքացիակեղրոն Հայաստանի: Այն հիմնուած է 2018-ի զարնան «Թաւշեայ յեղափոխութեան» ետք նոր կառավարութեան ուրուագծած տեսլականին վրայ եւ կը մարմնաւորէ Հայաստանի զարգացման սահմանափակումներու յաղթարձան եւ բարեփոխումներու խորացման նոր քաղաքական կամքը՝ կաշառակերութեան դէմ պայքարին, օրէնքի գերակայութեան ամրապնդման եւ մարդկա-

յին դրամագլուխին ուղղուած ներդրումներու միջոցով:

Ծրագրի իրականացմամբ արդիւնաւէտօրէն պիտի օգտագործուին Համաշխարհային դրամատան կառուցներու՝ վերակառուցման եւ զարգացման միջազգային դրամատան (ՎՁՄԴ), Միջազգային ֆինանսական ըկերութեան եւ Բազմակողմ ներդրումներու երաշխաւորման գործակալութեան (ԲՆԵԳ) փոխլրացնող ուժեղ կողմերը:

«Համաշխարհային դրամատան խումբի կողմէն առաջարկուող ռազմավարութիւնը կը յենի Հայաստանի վերջին փոփոխութիւններու շնորհիւ առաջացած աւելի խոր բարեփոխումներու խթանի ու քաղաքական կամքի եւ լաւ կառավարման նորացուած յանձնառութեան վրայ՝ աճի նոր մոտեցիլ ուղղութեամբ տնտեսութեան վերահասարակչուած աջակցելու համար», - ըսած է Համաշխարհային դրամատան Հայաստանի գրասենեակի ղեկավար Միլվի Պոսուլթօն:

Հայաստանի Իշխանութիւնները կը Փորձեն Պահպանել Հաւասարակշռութիւնը Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի Հետ Յարաբերութիւններուն Սեջ Փոլ Սթրոնքի

«Քարնեկի հիմնադրամի» աւագ գիտաշխատող Փոլ Սթրոնքին դրական կը գնահատէ Հայաստանի մէջ 2018 թուականի Ապրիլ-Մայիսին տեղի ունեցած իրադարձութիւններուն Ամերիկայի Միացեալ Նահանգներու եւ Ռուսաստանի Դաշնութեան իշխանութիւններու զգուշաւոր դիրք ընդունիլը:

28 Մարտին տեղի ունեցած «Հայաստանը փոփոխութիւններու շեմին» համաժողովի ժամանակ Փոլ Սթրոնքին նշած է, որ ԱՄՆ-ն եւ Ռուսաստանը այդ իրադարձութիւնները չվերածեցին աշխարհաքաղաքական խնդրի: Գիտաշխատողի կարծիքով՝ պատճառը այն է, որ երկու գերտէրութիւնները դասեր քաղած էին իրենց սխալներէն, մասնաւորապէս, 2014 թուականին Ռաբանիոյ մէջ տեղի ունեցած դէպքերէն:

«Հայաստանի հին եւ նոր քաղաքական խումբը նոյնպէս կը գի-

տակցէր այն վտանգը, որ կրնար ըլլալ այդ ընթացքին, սակայն բոլորը զգուշաւոր էին: Հաղորդակցութեան բոլոր ուղիները բաց էին Երեւանի, Ուաշինկթընի, Մոսկուայի միջեւ», - ըսած է Սթրոնքին:

Ըստ փորձագետի՝ ԱՄՆ-ն չակնկալէր, որ Հայաստանը ներքաղաքական փոփոխութիւններէն ետք լուրջ տեղաշարժ կ'ունենայ իր արտաքին քաղաքականութեան մէջ:

«ԱՄՆ-ի յարաբերութիւնները Հայաստանի հետ բաւականին դրական են: Դուք կրնաք ռազմավարական գործընկեր ըլլալ երկրի մը հետ, բայց լաւ յարաբերութիւններ ունենալ միւս երկրին հետ: Սա այն բաներէն մէկն էր, որ շատ լաւ կ'ընէին նախկին իշխանութիւնները, եւ այս իշխանութիւնները նոյնպէս կը փորձեն պահպանել այդ հաւասարակշռութիւնը», - եզրափակած է Սթրոնքին:

Մինքնի խումբի համանախագահներ Իկոր Փոփովի (Ռուսաստան), Էնտրիկ Շոֆերի (ԱՄՆ), Սթեֆան Վիսթրիթի (Ֆրանսա) եւ ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անճէյ Քասիրչիքի մասնակցութեամբ:

Յետոյ երկու երկիրներու ղեկավարները Լեւոնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման շուրջ բանակցութիւնները շարունակած են առանձնազրոյցի ձեռնարկով:

Այնուհետեւ քննարկման դարձեալ միացած են համանախագահները եւ արտաքին գործոց նախարարները: Ընդհանուր առմամբ, հանդիպումը տեւած է շուրջ 3 ժամ:

Հանդիպումէն ետք Մինքնի խումբի համանախագահները արդիւնաւէտ գնահատած են բանակցութիւնները:

«Դրական կը գնահատենք հանդիպումը: Երկար, յազեցած եւ հետաքրքիր խօսակցութիւն էր, որ հնարաւորութիւն տուաւ յստակեցնել առաջնորդներու դիրքորոշու-

մը, մենք յոյս ունինք, որ յառաջիկային նոր հանդիպում տեղի կ'ունենայ», - ըսած է Ֆրանսայի համանախագահ Սթեֆան Վիսթրիթի՝ առանց յստակեցնելու Փաշինեան-Ալիեւ յաջորդ հանդիպման ժամկէտը:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանը կը համարէ, որ բանակցութիւնները ԼՂ կարգաւորման հարցի շուրջ Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ նորմալ անցած է: Այս մասին վարչապետը յայտարարած է ԹԱՍՍ-ի հարցին ի պատասխան:

«Հանդիպումը նորմալ անցած է», - ըսած է Փաշինեանը՝ մեքենայն ստելու ժամանակ:

Նոյն աղբիւրի փոխանցմամբ, հանդիպումէն ետք Ատրպէյճանի նախագահը յորդորած է սպասել ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահներու յայտարարութիւններուն:

«Համանախագահները ամէն ինչ կ'ընեն», - ըսած է Ալիեւն ու անձամբ չէ մեկնաբանած հանդիպման ընթացքը:


Հայաֆոպիան Եւրոխորհրդարանի մէջ

ՌԱԿԸՊ ԶԱՐԱՔՕԼՈՒ

Նախորդ շաբաթ Եւրոխորհրդարանի մէջ զրուցեցինք հայաֆոպիայի մասին: Ֆոպիա որ կ'ըսենք փառք Աստուծոյ տեսականին շատ եղող նիւթի մը մասին խօսած կ'ըլլանք: Մեր մշակոյթին մէջ որքան շատ վախնալու սարսափելու պատճառներ ունինք: Սկսելով հակասեմիտ ձաբուտութիւնէրէ դէպի յուններուն կամ քիւրտներուն երկարող վախ ու սարսափի ցանկով մը շրջապատուած ենք: Այդ ցանկին մէջ իրենց բաժինը ունին նաեւ ասորիները: Նաստրեանները դուրս մնացին նման մթնոլորտէ, քանի որ անոնց հաշիւը արդէն մաքրուեցաւ 1924-25 թուականներուն Հաքքարի, Չեյմեքի մէջ: Վերջերս հաւանաբար էրկենեքոնցիներու հետ մշակուած նոր բարեկամութեան հետեւանքով անգամ մը եւս օրակարգի եկած է հայաֆոպիան: Ինչպէս 1930ական թուականներուն Գերմանիոյ մէջ ամէն շարիք կը վերագրուէր հրեաներուն, վերջին տասնամեակներուն անլուծելի դարձած քրտական խնդիրն ալ դիւրաւ բեռցուեցաւ հայոց:

Իբրեւ թէ պատմաբան ներկայացող Քատիր Մըսրըրը յայտարարեց իր ջանայ ՓՔՔի հիմնադիր Ապտուլլահ Էօճալանի հաշիւական ծագումը: Կը պնդէ թէ սպաննուած ՓՔՔականներու աստակները չեն թլփատուած: Հետեւաբար հայ են: Նոյնիսկ անոնցմէ ոմանց վիզերուն խաչ կախուած է: «Սապահ» թերթը, իբրեւ խորագիր կը յայտարարէր թէ բոլոր ՓՔՔականները հայ են: Հրանդ Տինքի դատավարութիւններուն իբրեւ դիտորդ մասնակցող գորավար Վելի Քիւլիւբէ կը յայտնէր հետեւեալ պարզաբանումը. «Պահ մը եկաւ, որ ԱՍԱԼԱ վերացաւ: Գիտենք որ ահաբեկչական կազմակերպութիւնները այսպէս մէկ անգամէն չեն վերանար: Ապա բեմ եկաւ Քուրտիստանի բանուորական կուսակցութիւնը: Իրենց անունին առաջին անգամ հրապարակուած էրուխի եւ Շեմտինլիի յարձակումներէն ետք յայտարարեցին, թէ 1,500 մարտիկներէ կը բաղկանան: Այդ ժամանակ ոստիկաններու կողմէ ձեռքաւորուած ահաբեկիչներու 65 տոկոսը չէին թլփատուած, այսինքն մուսուլման չէին»:

Կիւլեն աղանդի մօտ գործող «Չաման» թերթը նոյն տարուայ Նոյեմբեր ամսուն խորագիրով մը կը պարզէր այս երեւոյթը: «Ահաբեկիչները չեն թլփատուած»:



Դարձեալ նոյն աղանդի մօտ գործող «Աքսիոն» պարբերականն ալ կը բաժնէր այս հաստատումը:

Յիշենք այն ոճրագործը, որ Հրանդը սպաննելէ ետք մեծ ոգեւորութեամբ կ'աղաղակէր. «Հայը սպանեցի» պոռալով: Հայու կերպարը այս երկրի հարագատ ժողովուրդին անդամը ըլլալէ դուրս բերուեցաւ եւ չարութեան խորհրդանիշի մը վերածուեցաւ այս ֆոպիին պատճառաւ:

Պատմութեան կաճառի նախկին պետ Եուսուֆ Հալաճօղլու եւս կը յայտարարէր այս նոյն պատմութեան մասին, պնդելով թէ ՓՔՔի ահաբեկիչները թլփատուած չեն, հետեւաբար թուրք եւ մուսուլման չեն, ուրեմն հայ են: Ան տակաւին կը շարունակէր իր պնդումներուն նշելով թէ քրտամէտ կուսակցութիւններու հիմնադիրները նոյնպէս հայեր են: Անոր համաձայն այս կազմակերպութեան հրամանատարի դիրքի մէջ գտնուողները առհասարակ հայեր էին եւ սպաննուողները խաբուած քիւրտներ:

Անհամար են այս մասին իբրեւ թէ գիտական պնդումներ ներկայացնողները: Անցեալի վարչապետներէն Ահմէտ Տաութօղլու եւս կը կրկնէր այս նոյն յանկերգը եւ կը սպառնար ըսելով որ քիւրտներուն վերջն ալ հայերու նման պիտի ըլլայ:

Մինչեւ այսօր պետութեան պաշտօնական տեղեկագրիներուն մէջ հայերը կը շարունակեն կարեւոր սպառնալիք մը ըլլալով ներկայանալ: Արդարեւ Արտաքին գործոց նախարար Մեւլութ Չաոււչօղլուն իսթանպուլի մէջ գումարուող ՆԱԹՕի ժողովին նոյն պնդումը կրկնեց, ըսելով որ ՓՔՔականներու մէջ հայեր կան:

Յիշենք որ, Մեսրոպ Արքեպիսկոպոս իր պատրիարքութեան ժամանակ ունեցած էր հետեւեալ արտայայտութիւնը. «Գրգուռութիւնը այնքան բարձր է, որ ամէն վայրկեան կը լսեմ 67 Սեպտեմբերի ոտնաձայնները»:
«ԱԿՕՍ»

Հրանդ Տինք Հիմնարկի Կազմակերպութեամբ «Յիշողութեան Վայրեր, Յիշողութեան Ուղիներ Դէպի Այլ Ապագայ»



«Յիշողութեան վայրեր, յիշողութեան ուղիներ դէպի այլ ապագայ», այս խորագրի ներքեւ Հրանդ Տինք հիմնարկը գործակցելով գերմանական DVV International եւ Ֆրիտրիք Էպերթ հիմնարկներու, բանախօսութիւն մը կազմակերպեց 22 եւ 23 Մարտ թուականներուն: Կալաթա-սարայ, Եափը Քրեսի դրամատան դահլիճին մէջ կայացող բանախօսութիւնը արժանացաւ բուռն հետաքրքրութեան:

Բանախօսութեան բացման ճառերը արտասանեցին Հրանդ Տինք հիմնարկի նախագահ Ռաքէլ Տինք եւ Քոլոմպիա համալսարանի դասախօսներէն Մարիան Հիրշ:

Բանախօսութիւնը նախափորձ մըն էր Հրանդ Տինքի անուան 23 Ապրիլ Յիշողութեան վայրի բացման ընդառաջ: Առաջին նիստը կը կրէր «Դժուար անցեալը ներկայացնել» խորագիրը, որուն ժողովավարն էր Ալֆրէդ Պարթու ձանտան: Այս նիստին ատենախօսները Աթէնքի համալսարանէն Մարլեն Մուլու, Տիսքրիք Սիքս թանգարանի վարիչ Պոնիթա Պենեթ, Պէյրութի Ամերիկան համալսարանի դասախօս Մոնա Էլ Հալլակ եւ Հարաւային Ափրիկէի Ափարթայտ թանգարանի աշխատակիցներէն Էմիլիա Փիլթիեցա:

Երկրորդ նիստը կը կրէր «Արուեստը եւ յիշողութիւնը» խորագիրը եւ անոր ատենախօսներն էին Օշվիտու Պիրքենաու թանգարանի տնօրէն Այնէսքա Սիերացքա, արուեստագէտ Ատրէա Քնիթս եւ Տապլինի քաղաքի խորհուրդի մշակութային ժառանգի մասնագէտ Չարլս Տակն: Այս նիստի ժողովավարն էր Էօզալի Պիրօլ:

«Քաղաքներու թանգարաններ, շրջանային պատմութիւն եւ յիշողութիւն» խորագրեալ երրորդ նիստի ժողովավարն էր Ասենա Կիւնալ: Այս նիստին ելոյթ ունեցան Նիւ Եորքի քաղաքի թանգարանի

փոխ վարիչ Սարա Հենրի, Պելլիլ թանգարանի վարիչ Էն Լեւընս, Ամստերդամի թանգարանի անձնակազմէն Աննամարի Տէ Վիլթ: Այստեղ Հենրի պատմեց Նիւ Եորքի քաղաքի թանգարանի մէջ ցուցադրուած նիւթերու մասին հետաքրքրական գիտելիքներ: Ան նշեց թէ քաղաքի պատմութեան հետ միասին կը ցուցադրուին նաեւ տեղացի հնդկներուն ողջակիզման մասին գանազան նիւթեր: Անդրադարձներ կը կատարուի 11 Սեպտեմբերի յարձակումներու նիւթին եւ նաեւ քաղաքի պատմութեան մէջ մօտ չորս դարերու անցեալ ունեցող հանրատուններու մասին:

Օրուայ վերջին նիստը կը կրէր «Յիշողութեան վայրերու մէջ կեանքն ու յոյսը» խորագիրը: Այնչեպիւ Ալթընայի ժողովավարութեամբ կատարուող այս նիստին ալ իրենց ելոյթներով մասնակցեցան Միջազգային խղճի ցանցի վարիչ Լինտա Նորիս, Լեհաստանի հրեաներու թանգարանի ցուցադրութեան բաժնի վարիչ Յոհաննա Ֆիքուս, Քասթրուժ Փերեկվիլիի ծրագրիներու տնօրէն Լարս Էպերթ:

Բանախօսութեան երկրորդ օրուայ ատենախօսներու կարգին էր Հայաստանի Յեղասպանութեան թանգարան ինստիտուտի տնօրէն Յարութիւն Մարութեան: Շաբաթ օրուայ նիստերուն դարձեալ քննարկուեցան մարդկութեան դէմ գործուած զանազան ոճիրներու ուսումնասիրման եղանակները:

Այս երկօրեայ գիտաժողովի կազմակերպման մէջ կարեւոր դերակատարութիւն ունեցած էր Հրանդ Տինք հիմնարկի աշխատակազմէն Նայաթ Քարաքէօսէն, որ անցեալին Հրանդ Տինքի անուան յիշողութեան կեդրոնի նախապատրաստման շրջագիծով զանազան շփումներ ունեցած էր մասնակից ակադեմիականներէն շատերուն հետ:



MARONIAN
INSURANCE SERVICES

Since 1975, we have proudly served your health and life insurance needs.

We will continue to stand by your side and secure your **family** and **business** with our full range of insurance policies.

CALL US FOR A PERSONALIZED QUOTE

(818) 500 9585

805 E. Broadway, Glendale, CA 91205
sbmaronian@gmail.com
CA INSURANCE LICENSE # 0C99813

MaronianInsurance.com



HEALTH



LIFE



COMMERCIAL

Տօք. Յովհաննէս Գուլակ Աւետիքեանի Մեծարանքի Երեկոն



Լոս Անճելոսի Պոլսահայ Միութեան ցկեանս պատուոյ անդամ՝ հոգաբարձու եւ մշակութային յանձնախումբի ատենապետ Տօքթ. Յովհաննէս Գուլակ Աւետիքեանի նուիրուած մեծարանքի հանդիսութիւն մը տեղի ունեցաւ Կիրակի, Մարտ 24, 2019, Միութեան կեդրոնին մէջ, որուն ներկայ էին շուրջ 300 հոգի: Արդարեւ՝ մեծարեալն այս պատիւին կ'արժանանար իր 40 տարիներու միութենական գործունէութեան եւ 50 տարիներու եկեղեցանուէր ու հասարակական գործունէութեան համար:

Մեծարեալին կէս դարու միութենական եւ եկեղեցական ծառայութեան ու նուիրումին համար սրտի խօսքերով ելոյթներ ունեցան Ռոզալին Մատոյեան, Դոկտ. Արծրուն Աւագեան, Թոմիկ Ալեքսանեան (Իրանահայ Միութիւն), փրոֆ. Օշին Քէշիշեան, Մէկի Մանկասարեան-Կօշին, Ռաֆֆի Հերմոն Արաքս, մեծարեալի գաւազն Մանուկ Աւետիսեան եւ հայասէր փրոֆ. Թանէր Ազաճ: Ան իր ելոյթին մէջ դրուատանքով արտայայտուեցաւ Տօքթ. Յովհաննէս Գուլակ-Աւետիքեանի նուիրումին եւ հայ ժողովուրդի արդար դատին ի խնդիր տարուած հետեւողական աշխատանքներուն մասին:

Տպաւորիչ սրտի եւ գովասանքի խօսքեր ունեցաւ Արեւմտեան Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան: Իսկ Մուշեղ Արք. Մարտիրոսեանի ողջոյնի գրութիւնը կարդաց Արժ. Տ. Աշոտ Քննյ. Գամպուրեան:

Մեծարեալին յուշանուէրներով պատուեցին Հայրենիք, Իրաքահայ ու Իրանահայ միութիւնները, Տիպիկ Մէկի Մանկասարեան-Կօշինը եւ Խաչատուրեան Դպրաց Դաս երգչախումբը: Իսկ Պոլսահայ Միութեան կողմէ մեծարեալն արժանացաւ աղամանդակուռ զարդասեղի:

Այս առթիւ գործադրուեցաւ օրուան պատշաճ գեղարուեստական յայտագիր մը, մասնակցութեամբ Լիլիա եւ Ալեքսանտրա Եարալեան քոյրերու (քանոն եւ զուգերգ) Աստղիկ Տատուրեանի (ասմունք), Երկու Պար (Համազգայինի Նայիրի պարախումբէն), Դաւիթ Սամուէլեանի (երգ) եւ Արամ Լէփէճեանի (ելեկտ. դաշնամուր):

Աւարտին տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

Ձեր Ծանուցումները Կստահեցէք «Մասիս» Շաբաթերօրին

«Նոր Օր»ի Գրական Երեկոն Նուիրուած Յովհաննէս Թումանեանի Ծննդեան 150 Եւ Վահան Թէքեանի Ծննդեան 140 Ամեակներուն

Մեր պաշտօնակից «Նոր Օր» շաբաթաթերթի կազմակերպութեամբ տեղի ունեցաւ գրական ինքնուրոյն երեկոյ մը, նուիրուած «Ամենայն Հայոց Բանաստեղծ» Յովհաննէս Թումանեանի ծննդեան 150 ամեակին եւ «Բանաստեղծներու Իշխան» Վահան Թէքեանի ծննդեան 140 ամեակին:

Արդարեւ Մարտի 21ին, 2019 Պրըպէնքի Առաջնորդարանի Գալաթեան սրահին մէջ կայացած սոյն միջոցառումին ներկայ էին Արեւմտեան Թեմի առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, նախկին առաջնորդ Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեան, Հայաստանի աւագ հիւպատոս Տիար Արմէն Բաբուրդեան, Վեր. Ճօ Մաթոսեան եւ բազմահարիր գրասէր հասարակութիւն մը: Օրուան հանդիսավարն էր քաղաքիս ծանօթ մտաւորականներէն «Լարք» եւրոժշտանոցի փոխ տնօրէնուհի Թագուհի Արզումանեան:

Այս առթիւ մասնաւոր Հայաստանէն հրաւիրուած էին եւ բարձրորակ ելոյթներ ունեցան հայրենի գրականագէտներ Դոկտ. Փրոֆ. Սամուէլ Մուրադեան նիւթ ունենալով «Յաւիտենական Յովհաննէս Թումանեանը, եւ Դոկտ. Փրոֆ. Արծրուն Աւագեանը որուն նիւթն էր Վահան Թէքեան կեանքը եւ Գործը»:

Հիւր բանաստեղծները հանգամանօրէն ներկայացուցին վերոյիշեալ զոյգ բանաստեղծներուն գրական վաստակն ու արժէքը՝ իրենց ուրոյն տեղն ունենալով հայ գրակա-

նաութեան պատմութեան մէջ: Փրոֆ. Արծրուն Աւագեանի նոր հրատարակած «Վահան Թէքեան ազնուական քերթողը» հատորի մասին ելոյթ ունեցաւ փրոֆ. Օշին Քէշիշեան, ամփոփ կերպով ներկայացնելով գիրքի բովանդակութիւնը:

Այս առթիւ հայրենի հիւր դասախօսներուն եւ «Նոր Օր»ի խմբագրութեան գնահատագիրներ յանձնեց եւ իր տպաւորութիւնները փոխանցեց կլեմէնտէյի Քաղաքապետարանի անդամ Վրէժ Աղաճանեանը:

Սոյն միջոցառումին ողջոյնի եւ շնորհակալական սրտի խօսքերով հանդէս եկան «Նոր Օր»ի խմբագիր Հրաչ Սեփեթեան եւ ՌԱԿ-ի Արեւմտեան Ամերիկայի ատենապետ Տօքթ. Ռաֆֆի Պալեան:

Փրոֆ. Արծրուն Աւագեանի հատորի գինեձօնին իրենց մասնակցութիւնը բերին հեղինակը եւ օրուան յայտագրին մաս կազմած անձնաւորութիւնները:

Մէջ ընդ մէջ գործադրուեցաւ գեղարուեստական յայտագիր մը, մասնակցութեամբ սրնգահար Զուարթ ձուլահայեանի եւ շնորհալի երգիչներ Սուրէն Մկրտիչեաններու Դաւիթ Սամուէլեանի, դաշնամուրի ընկերակցութեամբ Արմինէ Ղազարեանի:

Երեկոն իր աւարտին հասաւ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի փակման խօսքով եւ աղօթքով:

Մեր շնորհաւորութիւնները «Նոր Օր»ին:



Մեր շնորհաւորութիւններն ու բարձրաուղջ եւ երջանիկ կեանքի բարեւմաղթութիւնները սիրելի մեծարեալին:

Լոս Անջելեսում ՀՀ գլխավոր հյուպատոսութիւնը և Գլենդէյիլի քաղաքապետարանը կազմակերպել են հանրային հանդիպում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի տիկին Աննա Հակոբյանի հետ:

Միջոցառումը տեղի կունենա երկուշաբթի, ապրիլի 8-ին, երեկոյան ժամը 7:00-ին, Գլենդէյիլի Ալեքս թատրոնում:

Հասցէ՝ 216 N Brand Blvd,
Glendale, CA 91203

Մուտքը՝ միայն հրավիրատուներով: Դրանք անվճար տրամադրվում են ՀՀ գլխավոր հյուպատոսութիւն շենքում՝ առավոտյան 10:00-1:30 և 2:30-4:30:

Աշխատանքային օրերից բացի, տոմսերը կարող եք վերցնել նաև շաբաթ օրը՝ ժամը 11:00-1:30:

Հասցէ՝ 346 N Central Ave.,
Glendale, CA 91203

Տեղերը սահմանափակ են:



Կոմիտաս Վարդապետի 150-Ամեակին Նուիրուած Միջոցառումներ Կ'անցկացուեն ԱՄՆ Արեւմտեան Թեմուծ

ԱՄՆ Արեւմտեան թեմը Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի բարձր հովանաւորութեամբ Ապրիլի 6-ին Առաջնորդանիստ Սրբոց Ղեւոնդեանց եկեղեցում կազմակերպուած է ընդգրկուն միջոցառում՝ նուիրուած Կոմիտաս Վարդապետի ծննդեան 150-ամեայ յոբելեանին:



«Վերագտնենք մեր հաւատքը փոփոխուող աշխարհում» խորագրի ներքոյ անցկացուող հանդիսութիւնը լայն ու բազմաբնոյթ ծրագիր ունի:

Բացումը կը լինի առաւօտեան ժ. 9:30 Բրբբանկի հայոց Սբ. Ղեւոնդեանց առաջնորդանիստ եկեղեցում, Տ. Վազգէն Քահ. Մովսէսեանի բացման խօսքով եւ շարժութեայ դպրոցների սաների երգեցողութեամբ:

Ապա գիտաժողովի ընթացքին Կոմիտասի կեանքի ու գործունէութեան տարբեր կողմերը բացայայտող ելոյթներ կ'ունենան հոգեւորականներ եւ մտաւորականներ, այդ թւում՝ Տ. Վազգէն Քահ. Բոյաջեանը կը ներկայացնի «Կոմիտաս Վարդապետը իբրեւ հոգեւորական» գեղուցումը, Տ. Յովնան Արք. Տէրտէրեան՝ «Կոմիտասեան Պատարագը», Վաչէ Մանկրեանը՝ «Հայ երգի հանճարը՝ Կոմիտաս վարդապետ», Տ. Զաքարիա Քահ. Սարիբէկեանը՝ «Կոմիտաս Վարդապետը որպէս հայ ինքնութեան բացայայտող», Հայկ Մադոյեանը՝ «Կոմիտասի կերպարի բացայայտումը ըստ նրա նամակների»:

«Հայրս շատ համեստ մարդ էր», ըսաւ Սեղան: «Նոյն մօտեցումը ունէր բոլոր մարդոց հանդէպ՝ առանց խտրութեան: Ամէն բանէ գոհ էր», շարունակեց ան: Սարուխանի համար «գոհ» մարդը սկսած է իր մանկութենէն, երբ սկսած է քալել իր կեանքի ճամբէն: Սարուխան ծնած է Արտա-

նուշ, ապա անցած է Պաթում, ուր հասակ առած է: Կ'անցնի Պոլիս՝ ուսանելու համար եւ որմէ ետք Վիեննա՝ կատարելագործելու համար իր գծագրական տաղանդը: Վիեննայի մէջ կը հանդիպի արաբ գործարարի մը, որ կը համոզէ Սարուխանը, որ Եգիպտոս գայ, ուր իրեն համար ասպարէզային մեծ հնարաւորութիւններ կրնան ստեղծուիլ: «Պարզ մարդ էր հայրս, հաւատացած է արաբին եւ մեկնած՝ Եգիպտոս», ըսաւ Սեղան:

Սարուխան կը հասնի Աղեքսանդրիա, բայց եգիպտացի գործարարը հոն չ'ըլլար գինք դիմաւորելու համար, ինչպէս որ խոստացած էր, իսկ Սարուխան «հաւատացած» էր ինչպէս որ Սարուխան գրած է իր վկայութիւններուն մէջ.

«Վստահ քայլերով կը դիմէի փարաւոններուն երկրին մէջ ինծի սպասող փայլուն հեռանկարներով լի ապագան»: Արաբ գործարարը չտեսնելով՝ չ'ուշանար յուսախաբուցութիւնը: «Անասելի ու անբացատրելի յուսախաբուցութիւնը պատեց զիս: Իջնել քարափ՝ ի՞նչ ընելու, ո՞ւր երթալու համար»:

Բայց ան իջած էր քարափ: Իջած էր, որպէսզի սկսի անակնկալներով եւ անորոշութիւններով լեցուն կեանքը բոլորովին անծանօթ երկրի մէջ. ան չէր գիտեր, թէ ո՞ւր պիտի երթայ եւ ի՞նչ պիտի ընէ: Սարուխան պիտի գտնէր ելքը: Ան կը հանդիպի հայրդիներու, որոնք կը խրախուսեն զինք: «Բնաւ մի՛ վախար: Ես կ'ունակեմ» արտայայտութիւնը կը կրկնուի՝ հաւաստիացնելով ու խրախուսելով երիտասարդ Սարուխանը: Եւ Սարուխան մէկ-մէկ պիտի բարձրանար Եգիպտոսի իր կեանքի անորոշ եւ անծանօթ աստիճանները եւ կերտէր իր կեանքը՝ հասնելու համար իր տաղանդի յաջողութեան: Եւ յաջողութեան գաղտնիքը: «Ես կը կարծեմ, որ աշխարհի մէջ յաջողութեան պայմանը երբեք չյուսահատիլն է, անվհատ պայքարիլը ձայնողութեան դէմ», ըսած է ան:

Կը դիտեմ Սարուխանի յաջողութեան արգասիքը: Իր երգիծանկարներուն մէջէն կը տեսնես սուր միտք, բայց նաեւ՝ զօրաւոր տեսողութիւն: Ան կրնայ դիտել հեռուն՝ ապագայի գալիք պատահարները եւ անցուդարձերը տեղադրելով իբրեւ երգիծանկար՝ միշտ պաշտպանելով արդարութիւնը եւ արհամարհելով արժէքներու ոտնակոխումը: 1960-ական տարիներէն արդէն կըրցած էր տեսնել, թէ ինչպէ՞ս կիպրոս կղզին պիտի բաժնուի երկուքի՝ աշխարհագրական սահմաններու հասկացողութեամբ: Շատ հետաքրքրական կերպով կըրցած էր պատկերացնել, թէ ի՞նչ կրնայ պատահիլ, եթէ Քրիստոս երկրորդ անգամ ըլլալով դարձեալ ուզէ աւանակի վրայ Երուսաղէմ մտնել Ծաղկազարդի օրը, եւ թէ ինչպէ՞ս մարդ պատնէշներ շինած է արգիլելու համար անոր մուտքը... Իր ժամանակներու կեանքի արժէքի չափանիշերը տեսնելով:

«Հայրս շատ հայրենասէր մարդ էր», ըսաւ Սեղան: «Բայց միշտ կ'ուզէր կիրարկել հաւասարակշռութիւն՝ իր ազգային ուղեգիծին մէջ»: Իր երգիծանկարներուն մէջ պակաս չեն մեր ազգային կեանքէն վերցուած ստեղծագործութիւնները: Սարուխան նաեւ ապրած է իր կեանքը՝ իր ժողովուրդին ծառայելով տարբեր բնագաւառներու մէջէն:

Եւ նայելով իր բոլոր գործերուն եւ անոնց ետին կեցած ազգային-քաղաքական ու ընկերային բոլոր թեմաներուն՝ կըրցայ նաեւ տեսնել, որ Սարուխան սիրած է մարդը եւ սիրած՝ կեանքը: Իր համեստ եւ գոհ ներաշխարհը իր մէջ կերտած է մարդկային ըլլալու արժէքը մարդուն մէջ: Իր երգիծանկարներուն մէջ կայ քննադատութիւն, քննական տեսողութիւն եւ երեւի քմծիծաղ, բայց այդ բոլորը՝ մարդուն սէրը եւ յարգանքը բարձր պահելով: Եւ այս ներաշխարհը կարելի է ընկալել, քանի Սարուխան հաւատացած է, որ «պէտք է սէր ու կիրք ունենալ գործին հանդէպ»: Սէրն ու կիրքը մարդկայինը կը ստեղծեն մարդուն մէջը:

Կարոյին ու Սեղային հետ այդ օր ես կամըջեցի իմ անցած ճանապարհս Հայկազի հօրեղբօրս տան յուշերէն մինչեւ Գահիրէ... Հայկազի տան այդ երգիծանկարը՝ «սատարել հայ մշակոյթին» եղաւ ապրող վկայութիւն մը: Վկայութիւն, քանի տեսայ հայ արուեստագէտ-երգիծանկարիչին տաղանդը, մեծ տաղանդը, որով մեծ ներդրում ունեցած է սատարելու հայ մշակոյթին, բայց նաեւ տեսայ, որ հայ մշակոյթը հայուն, իմ եւ մեր բոլորին կեանքին գանձն է եղեր: Եւ ինչպէս հայր Սարուխան իր դստեր՝ Սեղային իր երգիծանկարներէն մէկուն մէջ մակագրած է իր կեանքի խրատ-աւանդը:

«Մի՛ վախար նմանել հօրդ ամէն բանի մէջ, նոյնիսկ՝ իր դէմքի գիծերուն: Եւ գիտցիր, որ այդ դէմքի գիծին տակ պահուած կան հոգեկան այնպիսի գանձեր, որոնց նմանելն չես վնասեր»:

Իրապէս Սարուխան երգիծանկարիչի դէմքի գիծերուն եւ իր բոլոր գեղարուեստական գործերուն գիծերուն ետեւ կըրցայ տեսնել հայ մշակոյթի գանձերը, որոնք ճոխացուցած են հայուն կեանքը: Սարուխան եւ իր նմանները ապրեցան եւ իրենց կեանքերով ստեղծագործեցին՝ սատարելով հայ մշակոյթին:

Մենք այսօր ժառանգորդն ենք այս հայկական մեծ մշակոյթին՝ իր տարբեր երանգներով: Անոնք մեր կեանքին «գանձերն» են, որոնք մեզի՝ հայերուս կու տան հպարտութիւն: Հպարտութիւն մը, որուն միջոցով կրնանք ապրիլ:

Գահիրէի Սարուխանի պատիկ տուն-թանգարանէն այսօր կայ ապրող վկայութիւն մը: Սատարել հայ մշակոյթին: Սարուխանէն մէկ պատգամ, որ կը խօսի ինծի, քեզի եւ մեր բոլորին:

Իւրաքանչիւր հայ պարտի սատարել իր ազգային մշակոյթին, հայուն կեանքին, «գանձին»:

Հայուն կեանքին հպարտութիւնը: Հայուն մշակոյթը:

Արժէ պահել ու սատարել անոր: Հայուն մշակոյթը:

Զօրացիկ օժանդակներ Փրկենք

SYRIAN ARMENIAN RELIEF FUND

www.syrianarmenianreliefund.org

Syrian Armenian Relief Fund
P. O. Box 1948
Glendale, CA 91789-1948

Մեծ Պահոց Միջինը 2019

Ս. Ներսես Շնորհալի Հայրապետի «Քննող Գաղտնեաց» եւ «Շուր Սիրոյ» Աղերասները

ԴՈՎՏ. ԶԱԻԷՆ Ա. ՔՅՆՅ.
ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Միջինը

Այսօր Չորեքշաբթի Մարտ 27, Միջինըն է Մեծ Պահոց, եւ հաւատացեալներ իրենց պահքի ներշնչման առիթ կը նկատեն զայն ու կրօնաշունչ ոգիով հաւատարմօրէն կը համախմբուին, նոյնիսկ եթէ ընկերային սովորութեամբ, շեշտելով անշուշտ Քառասնօրեայ Մեծ Պահոց ներկայութիւնը իրենց առօրեայ կեանքին ներս: Նկատելի կ'ըլլայ նաեւ այս շրջանին համախմբուիլ առանձնացումի կեղծոններէն ներս որ իսկապէս կը զօրացնէ խոկումի եւ ներքին պատրաստութեան առիթն ու գործնական կերպը, յիշելով որ Միջինըն Մեծ Պահքի ճամբուն կէսը աւարտած ցոյց տալով, կը թելադրէ վերականգնել մեր ճիգերը վերանորոգման մեր ճամբուն վրայ: Զմուռնանք որ անցնող տարւոյ դարերուն ընթացքին հայ ժողովուրդի պատմութեան մէջ մեծագոյն հրաշքներէն եղան Հայ Եկեղեցւոյ յատուկ Ս. Գրիգոր Նարեկացիի եւ Ս. Ներսէս Շնորհալիի գոյգ պարգեւները, առանց որոնց քրիստոնեայ հայ ժողովուրդը պիտի մնար նկուն չղիմանալու աստիճան գինք շրջապատող չարաղէտ հոսանքներուն ու անվերջ հալածանքներուն:

«Քննող Գաղտնեաց»

Շնորհալի Հայրապետի «Հաւատով խոստովանիմ» ամենաժողովրդական աղօթքը, գրուած անձնական առաջին դէմքով եւ օրուան 24 ժամերուն համար յատուկ նոյնքան հատուածներով, կը հանդիսանայ Հայ Եկեղեցւոյ արտառուէ աղերսանքը Մեծ Պահոց ընթացքին գոր կը կարդանք անձնապէս եւ ոչ միանաբար, կրաւորական եւ մանաւանդ ենթակայական դիրքով, շեշտելով անձին ու անոր մեղապարտ կեանքին ընթացքը, խնդրելով ամէն միջոց եւ կերպ մաքրուելու եւ Աստուծոյ մարդուս շնորհած «պատկերը» մասամբ վերականգնելու համար: Քասնչորսէն մին «Քննող գաղտնեաց» տունն է, «գաղտնիքները քննող» Աստուծոյ ուղղեալ այս հատուածը, որմէ աղօթաւորը մեղաց թողութիւն կը խնդրէ անձնապէս: Եւ սակայն ինչ բանն է «գաղտնի» եթէ ոչ նոյն ինքն մեղքը որ պէտքը ունի «քննուելու» Քրիստոսի կողմէ, որքան ատեն որ մարդիկ անտարբեր գտնուելով, գիտնալով հանդերձ մեղքերուն թիւն ու անոնց ծանրութիւնը չեն ուզեր քննել զանոնք, խնդրելով որ Քրիստոս ինք կատարէ լրումը մարդկային սխալներուն եւ արդարացնէ գիրենք:

«Շուր Սիրոյ»

Այլուր նաեւ Շնորհալի Հայրապետ իր տարածուն շարականներուն եւ աղօթքներուն մէջ կուտայ կերպն ու դարմանը որոնցմով հաւատացեալը կարող պիտի ըլլայ իր մեղաւիջ կեանքէն մաքրուելու եւ Տիրոջ մօտենալու: Հոս սակայն Հայրապետը կը պարտադրէ որ հաւատացեալը ինք գլխաւոր բաժինը առնէ իր մարդկային բնութեան սայթաքումները քննելով, «սիրոյ կրակը» վառ պահելով իր մէջ, եւ «գինը» վճարելով, այլապէս անօգուտ պիտի դառնար միայն ապաւինիլ Տիրոջ ողորմութեան եւ սպասել ձեռնածալ: «Միւրոյ կրակը» այնքան ինքնատիպ կերպով գործածած է Ներսէս Շնորհալի երբ կ'երգենք իր յօրինած



«Նայեաց սիրով» երգին մէջ, կ'արտասանենք «Հուր կենդանի Քրիստոս» հատուածը, եւ կամ «Նորաստեղծեալ» շարականի «Սիրոյ քո հուր» հոյակապ բաժնին մէջ: Ամէնուրեք Հայրապետը կ'ուզէ որ այդ նոյն ինքն «Քրիստոսի կրակը», մարդու հոգիին եւ մտքին մէջ բոցն դրած մեղքն ու չարիքը «այրէ եւ մաքրէ» իր իսկ խօսքերով, եւ այդ նոյն կրակով վերնան, խճմտանքը մաքրուի, եւ Քրիստոսի սէրը իրարու նկատմամբ տիրապետէ:

Երբ գրիստոս «Հուր կենդանի» կ'անուանէ, մեր կեանքի ճրագը այդ կրակով կ'ուզէ վառել, երկինքէն երկիր բերելով զայն, նկատի ունենալով որ միայն այդ կերպով, ինչպէս Առաքեալները Հոգեգալստեան օրը կրակի բոցերը ստացան եւ զօրացան, նոյնպէս նաեւ Քրիստոսի հետեւողը մաքրուի եւ «լոյսի որդի» դառնայ, մնալով հանդերձ «այս աշխարհի որդին», եւ խորհրդանշականօրէն զգուշացնելով նաեւ մեզի ծանօթ ամենօրեայ կործանարար կրակէն որ կը խորտակէ ամէն ինչ հրդեհներու վերածուելով: Քրիստոսի հուրով Հայրապետը առաջին «դեղագիր»ն է գոր կուտայ մեզի որուն շնորհիւ «ախտն ու աղտը, հիւանդութիւնն ու անմաքրութիւնը», ինչպէս ինք կը բնորոշէ, փարատին մարդոց մէջէն:

«Ձեռքին մի՛ շիջուցանէք»

Սիրոյ կրակը Շնորհալի Հայրապետին մօտ գերազանցօրէն սիրոյ աղբիւրն է՝ Սուրբ Հոգին, որ որպէս բոցեղէն զօրութիւն աշակերտները առաքեալներու վերածեց: Անոր ակնարկելով Պօղոս Առաքեալ կը զգուշացնէ թէ այդ աստուածապարգեւ շնորհը «մի՛ մարէք», տրուած ձեզի ձեր կերպով խաչի բարձունքէն, եւ սակայն մարդիկ կարող են զայն մարել վայրկեանի մը մէջ, ինչպէս մոմին բոցը, մնալով խաւարի եւ ցուրտի վտանգներուն ենթակայ, կորսնցնելով յոյսի եւ լոյսի, ջերմութեան եւ բերկրանքի քաղցրութեան վերանորոգ շնորհները: Այս ալ երկրորդ «դեղագիրն» է տրուած մեզի Պօղոս Առաքեալին:

«Գտող զիս արա»

Կարողութիւն տուր ինձի որ կարենամ գտնել, կ'ըսէ Հայրապետը «Առաւօտ լուսոյ» բողբոխ յայտնի առաւօտեան արշալոյսի երգին մէջ: Ինչն է կորսուածը գոր պէտք է գտնել: Նոյն ինքն Քրիստոս՝ «ողորմութեան գանձը» որ շատ անգամ «ծածկուած» կ'ըլլայ մեզմէ, մեր անփութութեան եւ անտարբերութեան պատճառով: Մեր այլազան արարքներով կը հեռանանք իրմէ եւ


ձր» նաեւ Աստուծոյ արարչագործութիւնն իսկ է ուրիշ համատարած բարիքն ու բարեգործութիւնը հասան մարդկութեան, հակառակ մեղքի յարատեւ մեքենայութիւններուն: Աւագ Շաբթուն լծակից պարտինք ըլլալ Տիրոջ վերջին ճանապարհորդութեան՝ արժանի դառնալու համար իր Յաղթական Լոյսին: Ու զայն կատարելագործելու միակ կերպը, ըստ Ներսէս Շնորհալիի, սիրոյ կրակը վառ պահելն է ու գանձին տէրն ըլլալն է, փոխան անտարբերութեան եւ աշխարհիկ աւանդներու:

Աւետարանը՝ Պատուանդան

Եթէ գաղտնիքներու քննողը «լոյսն ու կրակն» են, հաւատացեալը պիտի կանգնին միայն Աւետարանի պատուանդանին վրայ եւ անկէ ստանան անոնց «վառելանիւթը», քանզի եթէ որպէս սկիզբ եւ սկզբունք պատուանդան չկայ մեզ կանգուն պահող, եւ եթէ անաստուածներու ճամարտակութեամբ պիտի սկսին մեր քննութիւնները, եւ արդի մտածողութեան շուրջած անկրօն նախդիրներով պիտի շարունակուին մեր հետազոտութիւնները, մէկդի դրած կ'ըլլանք Ս. Գիրքն եւ Աւետարանը, ուրացած կ'ըլլանք Աստուծոյ Թագաւորութեան ներգործութիւնը, հեռու կը մնանք Ս. Եկեղեցիէն, եւ մեր մտածումը կը թեքի դէպի նոյն ճամարտակութիւնները որուն գոհ գացած է այսօր աշխարհի հիւանդ մէկ գանգուածը: Հաւասարակշռութիւնը ապահովաբար եւ փաստացի կերպով պահողը եղած է ու պէտք է ըլլայ այս երկու հազար տարիներէ ի վեր Քրիստոսի Սուրբ Եկեղեցին: Թող որ վայելենք անոր հովանին Քրիստոս Թագաւորի մշտանորոգ ներկայութեամբ:

VA Print Media


Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles



Հետաքրքրուած ենք իրենց փոխարժեքով ստանալ՝

- Հայկական երգարաններ
- Կիլիկիոյ պատմական գիրքեր
- Յեղասպանութեան հետ աւրնչուած գիրքեր

Եթէ ունիք եման գիրքեր եւ կը փափաքիք զանոնք վաճառել, կը խնդրենք մեզի հետ կապ հաստատել Հեռաձայնելով՝ ՎԱՀԻ ԱՁԱՊԱՀԵԱՆԻՆ:



Նոր Գիրքերու
Տպագրութեան
եւ Հին Գիրքերու
Նորոգութեան

Vahe Atchabahian

2004 E. Washington Blvd. • Pasadena, CA 91104
Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com

Ուխտագնացութիւն Դեպի Դսեղ

«Ես շնչում եմ կենդանի Աստուծոյ շունչը ամենուր, Ես լսում եմ նրա անլուռ կանչն ու հուճը ամենուր, Վերացնում է, վերացնում ամէնա լուռ իմ հոգին, Տիեզերքի խոր մեղեդին ու մըմունքը ամենուր»:

Ասել էր Յովհաննէս Թումանեան

ՊՕՐՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ

Ոչ թէ մի հինաւուրց վանք էինք գնում ուխտագնացութեան, նրա խորտակուած վէմերից, նրա վերաւոր խաչերից հնչող լացի ու աղօթքի մըմունքներին ծնրադրելու, այլ՝ Թումանեան Յովհաննէսի ուխտատեղի դարձած Դսեղի տուն: Ինչ է, ուխտագնացութեան գնում միայն վանքեր, չէ որ այնտեղ էր իջեւանել հայերի հին հաւատքի գրի, դպրութեան, գիտութեան, արուեստների, բանաստեղծութեան հովանաւոր Տիր աստուածը, իր տիեզերական հուրը շարժելով գիւղի իմաստուն մանչի հոգում:

Ինքնաշարժը վարողը, մեր գրոյցներից ու երգերի հնչիւններից խանդակաթ, այն վարում էր արեգակի ճառագայթների լոյսի շողերին բազմած: Լուռուայ գեղահարաչ, չքնադագեղ աշխարհում էինք, Դեբետ գետի վարարած ջրերի վրայ բազմած կամուրջն էինք անցել: Նրա աջ կողմում, հեռու լեռների լանջերի սրտից պայթած ջրերը, կատաղի յորձանձքով գնում ներքեւ, գարկում ժայռերի կողերին, փշրուած, փրփրած բաշերով վազում, ահագնացած մունչիւնով թնդացնում ձորը: Արեգակի շողերն էին շոյում փրփուրը, այն լոյս դարձած փարուած գետի կողերի երեսին: Ինքնաշարժը դադարեցրել էր վազքը, այն վարողը հրաւիրել իջնել Դեբեդի ափ, նրա երգը ունկնդրելու, եւ ինչ... աջ կողմը գահաւէժ, շատ բարձր քարափ էր, հրաբուխների աստուած Վուլկանը իր կրակ լաւայով շարժել բարձունքը, ծիածանի գոյներով պատել երեսը, կարծես ձեռակերտ լինէր: Պատմում էին, որ այդ քարափին էր կանգնել սիրուց մթազնած Անուշը, նրա յատակի փրփրակէզ ջրերում Սարոյի աստուերն էր տեսել, նրան փարուելու համար նետուել գիրկը: Անուշ, Սարոյ սիրով արբեցած հոգիներով լուռուայ սարերի հէքիաթային սիրահարներ, «Բարձր Սարեր»-ի լանջերից յորդած ջրերի, լեռների ծաղկունքի, գետակների վրայ լացող ուռնիների հորովէներով ճախրում յաւերժութիւն, իրենց հետ տանելով «վերաւոր» հոգու մունչիւններով գէնք պայթեցնող Մօսի-ին: Այդ լեռներից արձագանգած «բարձր սարերի» երգերի հնչիւններն հասնում մեզ, Դեբետի խենթացած ջրերի փրփուրի մէջ մեր դիմաց յառնել իրենց սիրոյ կանչերով, քրքիջներով Սարոն, ուռնեւ նման վարսերը դէմքին ալիքուած, ջրահարս դարձած Անուշը: Ոլորապտոյտ ճանապարհով ինքնաշարժը բարձրանում դէպի լեռան գագաթ, երկնի կապոյտն էր իջել ցած, գնում էինք կապոյտ անհունների մէջ մխրձուելու, չէ, գնում էինք Յովհաննէսենց տուն, այն բազմած էր սարաւանդի վրայ: Ինչքան բարձրանում էինք, այնքան սարսափազդու էր դառնում, իրարից վշտացած, իրարից հեռացած, պատուած լեռների յատակը: Արդեօք այդ լեռների, ո՞ր անդունդի եզրի գիշերային խաւարին չարքերը շրջապատել էին լուռեցի Մաքօ-ին, իրենց վայնասուն ճիւղերով նրա շուրջը պար

բռնել, ճանկերով քաշել նրա հագուստից, Մաքօ-Մաքօ կանչերով նրան բերել իրենց շարքեր, որ նա էլ պար բռնէր իրենց հետ, եւ իչպէս չխելագարուէր Մաքօ-ն...: Սարաւանդում էինք, Դսեղ գիւղն էր փռուել նրա երեսին: Կանաչ էր հագել Դսեղը, արեւն էր իր տաքուկ շունչով շոյում նրան, նրա ճառագայթների հպումից հալուած էին ծառերի տերեւներին իջած վաղորդայն ցօղի հատիկները: Արեւագլ էր, սպիտակ անրջային լոյս էր հոսել Դսեղի շարանշարան տների վրայ, ինչքան դիւթի էր դիտել մայր բնութեան արարումը: Ինքնաշարժը անցնում էր Դսեղի գիւղամիջեան ճամբաներով, դսեղիները փողոց էլել, ձեռքերի թափահարումներով բարի գալուստի ողջոյն հաղորդել նրանց: Ինքնաշարժը կանգ արել երկար պատշգամբով երկարականի տան առաջ: Այդտեղ էր Յովհաննէսը լոյսին բացել ակները: Այդտեղ էր առիքն էր իր երեւակայութեան թռիչքը, այդ սարերում էր տեսել Անուշին, Սարոյին, Մոսիին, Մաքօյին, Մարոյին, նրանց պատուամները, իրենց աստուածների ոգու թռիչքի խոյեանքով՝ ասք հիւսել նրանց մասին, որ դարերին թիկնած յաւերժին: Ինչքան մանչեր ու աղջնակներ նրանց ասք երգում են, մենախօսում, հայրերին ու մայրերին հարցրել՝ իսկապէս նրանք եղե՞լ էին, նրանց պատասխանած կը լինէին, որ նրանք իրնց Լուռի աշխարհի անուշ հովիկների սարերի գաւակներն էին: Կլենտէյլ քաղաքում բնակուող, լուռուայ Ստեփանաւանում ծնուած Հռիփսիմէ-Գրուենայ կիրակոսեանը պատմել, որ իրապէս Անուշը, Մոսի, Սարոն Դսեղի հրաշածին բնակիչներ եղել: Նրանց հետ առնչուած դէպքերի պատմները ներշնչանքի աղբիւր էին հանդիսացել Յովհաննէսին՝ արարելու սիրոյ, լուռուայ աշխարհի բնութեան, նրա մարդկանց «Ատաթ»-ների աստղերի լոյսով վարար քերթուածներ: Համաձայն նրա պատմի սիրոյ երգիչ, իմաստուն քերթող Սայեաթ Նովան եղել էր իրենց պապերի «Մեծ Պապը», եւ որ իր քոյրը դեռեւս շարունակում կրել նրա անդրանիկ որդու ազգանունը: Լուս Հռիփսիմէ-Գրուենայի պատմին, իր Ստեփանաւանից Յովհաննէս պապը ամուսնացած է եղել Թումանեանի հօրաքրոջ աղջկայ հետ: Նա եղել է վարպետ հիւսն, Թումանեանը խնդրել էր Դսեղ գալ, վերանորոգել գիւղի դպրոցների փայտեայ իրերը, նաեւ օգնել տեղի բնակիչներին նորոգելու իրենց տների դուռ պատուհանները, կահ կարասիները: 1946 թուականի աշնանը, Յովհաննէս պապը Դսեղից վերադառնալուց յետոյ, իրենց տնամերձ պարտէզի խոշոր սեղանի շուրջը հաւաքել տղաներին, աղջիկներին, հարսերին եւ յիսուններկու թոռներին ու ծոռներին, նրանց պատմել, որ Դսեղի կոլխոգի գրասենեակում աշխատած ատեն նախագահը ներս մտել, խնդրել իրեն մի քիչ հանգստանալ, դուրս գալ տեսնել ովքեր էին այնտեղ: Նա դուրս եկել գիւղամէջ, մօտեցել հաւաքուածներին, բարեւել բոլորին: Նրանց մէջ եղել



է նաեւ բարձրահասակ, թիկնեղ, մինչեւ գոտկատեղը հասնող սպիտակ մօրուքով, ազդեցիկ տպաւորութիւն ներշնչող մի տղամարդ... նրան ներկայացրել էին որպէս Անուշի եղբայր՝ Մօսին: Յովհաննէսը բարեւել էր նաեւ Մօսի-ին, նստել նրա կողքին ու երկար գրոյցից յետոյ հարցրել նրան. «Մօսի ախպեր, չե՞ս փոշմանել, որ սպաննել ես Սարոյին եւ երկու ջահել կեանքեր խորտակել: 97 ամեայ գառամեալ ծերունին, սրբելով աչքերից իջնող արցունքները ասել է. «Բա չեմ փոշմանել, բա որ իմանայի, որ աշխարհի «աղաթները» փոխուելու էին, բա ես այդ «խալաթը» կ'անէի»: Ամէն օր նրանց ման եկած վայրերն եմ նաեւ ե'ս ման եկել՝ լացել եմ, ոչ մի օր չեմ մոռացել նրանց, շատ ափսոս, որ երկու ջահել կեանքեր խորտակեցի: Ապա, թաշկինակով սրբելով աչքերը, շարունակել է. «Ուստա Յովհաննէս, վաղը եթէ ազատ ես, արի գնաք անտառ, բեզ բան ունեմ շանց (ցոյլ) տալու: Յաջողօր օրը՝ Յովհաննէսը Մօսի հետ գնացել էին դէպի անտառ, անցել ձորերով, բարձրացել սարերի բարձրունքներ, մտել անտառի խորքերը, դուրս եկել մի բացատ, որի կեղրոնում եղել է մի դարաւոր ընկուզենի: Մօսեն լով նրան, նայել նրա բնին, հիացած բացականչել. «Համա թէ նախել ես հա՛, Մօսի ախպեր, սա հրաշք է: Մօսին ընկուզենու ծառի բնի վրայ դանակի ծայրով փորագրած եղել Սարոյին, սպաննուած ու խելագարուած տեսքով հերարձակ Անուշին... արտասուելիս: Նրա արցունքները կարծես շիթ առ շիթ կաթում էին Սարոյի կիսաբաց աչքերին, նրան իր սիրոյ լոյսով կենդանութիւն պարգեւելու: Անուշի ու Սարոյի չորս կողմերը լուռուայ սարերի գլխահակ սպիտակ կակաչներ էին քանդակուած, որոնք սպիտակ լոյս էին շարժում նրանց վրայ: Հիացմունքից քարացել էր Յովհաննէսը, երկար նայել սպաննուած սիրոյ քանդակը, մինչ ծառի տակ ծնկաչոք լացում էր 97 ամեայ գառամեալ Մօսին: «Գնանք, Մօսի ախպեր, դու արդէն երկար տարիներ շատ ես լաց եղել, ասել էր Յովհաննէսը: Այո, Թումանեանի «Անուշը» նախնեաց աւանդութիւնները ողբերգող, Լուռի աշխարհի մարդկանց հրաշաստեղծ քերթուած է, երգն է իր սարերի, երգն է բնութեան ու սիրոյ: «Քերթուածի «հերոս»-ները ապրել էին մինչեւ վերջին տարիները, Անուշի մայրն էր շուտ մահացել՝ չղիմանալով աղջկայ կորուստի ցաւին:

Յաջող տարի, Յովհաննէս պապը Դսեղից վերադարձին, հաղորդել էր, որ 98 ամեայ Մօսին մահացել է այդ տարում: Թումանեանի եղբօր աղջիկը դիմաւորել էր մեզ, տան մի քանի սենեակներում ցոյց տուել Յովհաննէսի անձնական իրերը, մինչեւ իսկ օրօրոցը: Յովհաննէսի լոյսի աստուերն էր ամէնուր թեւածում: Վաղ լոյս էր դարձել, նա դեռ չէր աւարտել հիւսելու իր աշխարհի լեռների ու նրա մարդկանց կեանքի հէքիաթի պատումները, ափսոս եղեւ: Տան հինգ սենեակներում վերստեղծել էին նրա Թիֆլիսեան բնկարանի տեսքը, հապա՛ անթիւ գրքերով լիքը գրադարանը, անձնական ձեռագրերը, Գրիգոր Արծրունիի «Մշակ» ու այլ լրագրերի հրատարակութիւնները: Պատուհանին մօտիկ գրասեղան, նրա առաջ նստած երկնել բանաստեղծութիւն, գիւղի, Լուռի կեանքի պատումներ: Երկնից աստղերն էին պատուհանին իջել, իրենց հին հաւատքի աստուածներին ներշնչանք ճամբել իրեն, նրանց հետ գրոյցի նստել, նրանց լոյսը ցօղել իր երգերում: Տան առաջ պուրակ էր, այնտեղ կանգնել էր Յովհաննէսը, արձանացած նայում Յովհաննէսին, նրա անդրին քանդակողը քարի սրտում դրոշմել էր նրա բարի-բարի նայուածքը, դէմքի լոյսը, նրա հոգու ցոլած աստեղային ժպիտը, նոյնիսկ քարի սրտից շարունակում ժպտալ մարդկանց: Մամիկոնեան ազնուագարն իշխաններ հասել էին Դսեղ, այնտեղ պատել եկեղեցի, որ Դսեղի լեռների լանջերից էլ փառաբանէին իրենց արարիչին: Դսեղի թիկունքի արտերին թիկնած բարձունքին էինք... չորս բոլորը հայոց Արշակունիների, Կամարականների, Զաքարեանների Լուռի աշխարհի լեռներն էին փռուել, երկինք խոյացած լեռների գագաթներ, խորը ձորեր, արեգակի լոյսի շողիւն կապոյտն էր իջել նրանց երեսներին, նրանց լանջերի արօտները կանաչ-կանաչ ժպտում: Այդ ձորերում ու լեռների լանջերի արօտներում էր արդեօք Սարոն ոչխարների հօտը տարել արածացնելու, այնտեղ յորդացած աղբիւրներից էր Անուշը ջուր լցրել իր կուժը, նրան հանդիպելուց փախել վրան: Այդտե՞ղ էին արդեօք լուռուայ պարմանուհիները «Զամ Գիւլիմ» սօնախմբել, նրանց երգերի տաղերի հնչիւնները, հասել Նար Մովինարին, երկինքը պատել ամպերով, նրանց տակից ջուր վարարել, թրջել աղջիկներին, թրջուած աղջիկներ գնացել ձորում հոսող Դեպետ գետ, լանջերից պոկած ծաղկունքով փնջեր նետել, հովիւներ իջնէին ջրեր, ծաղկեփունջ ճանկէին, սի-

Տունը Պետք է Ըլլայ Կնոջ Աշխարհի Կեդրոնը, Բայց որ Երբեք՝ Սահմանը Յայտնի Կանայք՝ Կեանքի Մասին

- 1) Տղամարդու հետ պետք է լաւ ըլլալ: Վատ ես ալ կրնամ ապրիլ: (Մերիլին Մոնրօ):
- 2) Անտարբերութիւնը ջղային կը դարձնէ կինը, իսկ հոգատարութիւնը՝ քնքուշ: Իւրաքանչիւր տղամարդ ունի ա՛յն, ինչին արժանի է: (Ֆահնա Ռանեսկայա):
- 3) Եթէ դուք կ'ուզէք ունենալ ա՛յն, ինչ երբեք չէք ունեցած, պետք է ընէք ա՛յն, ինչ երբեք չէք ըրած: (Գօգո Շանէյ):
- 4) Եթէ կինը հանելուկային կը թուի, ուրեմն այստեղ տղամարդու մատը կայ: (Օտրի Հեփպըրն)
- 5) Դժուար է անդիմադրելի ըլլալ, եթէ ծոյլ ես: (Սոֆի Լորէն)
- 6) Տունը պէտք է ըլլայ կնոջ աշխարհի կեդրոնը, բայց ոչ երբեք՝ սահմանը: (Մարկրէթ Թաչըր)
- 7) Դաւաճանութիւնը կրնաս ներել, բայց վիրաւորանքը՝ ոչ: (Աննա Արմադոլա)
- 8) Միայնութիւնն ու զգացողութիւնը, որ դուն ոչ ոքի պէտք ես, աղքատութեան ամենասարսփելի տեսակներն են: (Մայր Թերեզա)
- 9) Զայրոյթն ու կատաղութիւնը ի վիճակի չեն որեւէ խնդիր լուծելու: (Կրէյս Քեյլի)

Հայ Կինը՝ Պատմութեան Խորքերէն

Պատմութեան մէջ, հայկական արքունիքներուն մէջ, թագաւորներու կանայք նոյնպէս ունեցած են որոշ դերակատարութիւն (անոնց անուանած են Հայոց տիկին): Ժամանակակից հասկացութիւններով՝ հայ կանանց հասարակական ու քաղաքական դերի աշխուժացումը սկսած է 19-րդ դարուն: Անոր հասկացումը նպաստած են հայաշատ քաղաքներու մէջ օրիորդաց դպրոցներու հիմնումը, ուր հայ օրիորդները կրթութիւն կը ստանային: Դպրոցները կը հիմնուէին եկեղեցւոյ կողմէ, սակայն անոնց շրջանաւարտներէն շատերը, յետագային, կը դառնային յառաջդիմական գաղափարներու տարածողներ: Այդ կերպով, հայ եկեղեցին փորձած է 19-րդ դարուն ի կատար ածել Մխիթար Գոշի պատգամը: Իբրեւ արդիւնք՝ շատ արագ ի յայտ եկած են հայ կին մշակութային գործիչներ, գիտնականներ, գրողներ, պետական, հասարակական ու քաղաքական գործիչներ, ազատ արհեստներու կիրառողներ: Օրիորդաց դպրոցներ ստեղծուած են ե՛ւ Արեւմտեան, ե՛ւ Արեւելեան Հայաստանի մէջ: Սակայն, որքան ալ զարմանալի է, կանանց հասարակական գործունէութիւնը առաւել աշխոյժ եղած է Օսմանեան թուրքի տիրապետութեան ներքոյ, առաջին հերթին՝ Կոստանդնուպոլսոյ մէջ:

Երուսաղէմի Սուրբ Յարութեան Տաճարին Մէջ

Շարունակուած էջ 13-էն

հնչած: Այն Մեծ Պահջին ընդառաջ աւելի տպաւորիչ, ազդու եղած է եւ իրենց աւելի մօտեցուցած է Տիրոջ:

Գէորգ Տապաղեանի կարծիքով իւրաքանչիւր հայ պէտք է այցելէ Երուսաղէմ, զգայ Սուրբ Յարութեան տաճարի խաղաղեցնող մթնոլորտը, որ հնապատարութիւն կու տայ բացառելու ինքզինքդ եւ վերաբերելու ապ-

- 10) Եթէ դուն որեւէ բան կ'ընես ուրիշներու համար՝ առանց շնորհակալութեան խօսքեր սպասելու, մէկը ատիկա գրի կ'առնէ ճակատագրերու գիրքին մէջ ու քեզի կ'ուղարկէ աներեւակայելի երջանկութիւն, որուն մասին դուն նոյնիսկ չէիր երազած:
- (Անժելինա ճոլի)
- 11) Տղամարդիկ աւելի քիչ կը խաբեն, քան՝ կանայք, բացառութեամբ այն պարագաներուն, երբ կը խօսին իրենց զգացմունքներուն մասին: (Արքայադուստր Տիանա)
- 12) Տղամարդը պէտք է ընդունիլ այնպէս, ինչպէս որ կայ, բայց գինք այդ վիճակին մէջ ձգելը անթոյլատրելի է: (Սարի Կապոր)
- 13) Երջանկութիւնը ամուր առողջութիւնն է ու վատ յիշողութիւնը: (Ինկրիտ Պըրկմէն)
- 14) Կեանքը չափազանց կարճ է: Այդ պատճառով ալ սկսեցէք աղանդերէն: (Պարպրա Սթրէյզանտ)
- 15) Իսկական սէրը այն չէ, որ կը դիմանայ տարիներու բաժանման փորձութեան, այլ այն, որ կը դիմանայ տարիներով միասին ըլլալու փորձութեան: (Հելեն Ռոլինս):

Այստեղ, 19-րդ դարու վերջը, քանի մը հայ կանայք, տղամարդոց հետ հիմնադրած են կազմակերպութիւններ եւ միացած են քաղաքական կուսակցութիւններուն: Օրիորդաց վարժարանները աւարտելէ ետք, այդ կիներէն շատերը, այնուհետեւ, ուսանած են Եւրոպայի մէջ: Կոստանդնուպոլսոյ մէջ հասարակական աշխույժ գործունէութիւն ծաւալող կիներէն, 19-րդ դարու վերջը, յատկապէս շատ յայտնի էին երկուքը՝ Սրբուհի Տիւսարն (Վահանեան) ու Ջապէլ Ասատուր: Անոնք են, որ կազմեցին «Կանանց իրաւունքներու Հռչակագիր» ի նախագիծը: Հռչակագիրին դրոյթներն էին.

- հաւասար իրաւունքներ տղամարդոց եւ կանանց համար,
- մասնագիտութեան ընտրութեան իրաւունք,
- երկակի բարոյախօսութեան չափանիշերու վերացում, որոնցմէ ամուսնական կեանքի մէջ կ'օգտուին տղամարդիկ, - բարձրագոյն կրթութիւն ստանալու իրաւունք՝ իբրեւ երեխայի դաստիարակութեան բարելաւման միջոց,
- համայնքի գործունէութեան մէջ կանանց հաւասար մասնակցութեան իրաւունք,
- օժիտի սովորոյթի վերացում,
- ազգի պահպանման եւ անոր մշակոյթի փոխանցման մէջ կնոջ դերի ընդունում:

րած կեանքդ:

«Տպաւորուած եմ Երուսաղէմի Հայոց պատրիարքութեան հայր սուրբերու եւ սարկաւազներու ընդունելութեան, անոնց կատարած աշխատանքին, որոնք ամէն ջանք կը գործադրեն՝ Երուսաղէմի մէջ քրիստոնէական արժէքները եւ հայկական ներկայութիւնը պահպանելու ուղղութեամբ: Անոնք հայ եկեղեցւոյ նուիրեալ ծառայողներ են», - իր խօսքն ամփոփեց տուտուկահարը:

Գէորգ Չիչեան

Ուժեղ Տղամարդը Իմաստուն Կնոջ Շնորհքն է

Անգամ մը, ընթրիքի ժամանակ, նախագահին կը մօտենայ ճաշարանին տէրը եւ կը խնդրէ առանձնագրոյց ունենալ առաջին տիկնոջ հետ: Երբ վերջինս կը վերադառնայ, նախագահը կը հարցնէ, որ ճաշարանի տէրը ինչու այդքան հետաքրքրուած էր իրմով: Կինը կը բացատրէ, որ երիտասարդ տարիներուն այդ մարդը սիրահարած էր իրեն եւ ամէն ինչ կ'ընէր անոր սիրտը գրաւելու համար: Ամուսինը կ'ըսէ. «Եթէ դուն անոր հետ ամուսնանայիր, կը դառնայիր այս ճաշարանի տիրոջ կինը»: Առաջին տիկինը կը պատասխանէ. «Եթէ ես անոր հետ ամուսնանայի, ան կը դառնար այս երկրին նախագահը»:

Եւ, իրապէս, ժողովրդական ասացուածք կայ, որ կ'ըսէ, - իւրաքանչիւր յաջողակ տղամարդու մէջ քին կանգնած է մեծատառով կին, որ կ'ուղղորդէ ամուսինը ճիշդ ճանապարհին եւ կ'ոգեչնչէ անոր նոր ձեռքբերումներուն: Ան իւրայատուկ է, միակը եւ ցանկալին, ան կրնայ իւրաքանչիւր սովորական տղամարդ դարձնել իսկական տղամարդ: Չկայ որեւէ անհնար բան:

Հասկնալու համար, որ ինչ կ'ուզեն տղամարդիկ, եկէք վերադառնանք ակունքներուն: Հին ժամանակներէն, ուժեղ եւ թոյլ սեռերու միջեւ յստակ սահմանուած եղած են հասարակական դերերը: Տղամարդը գինուր կ', հայթայթող, կերակրող: Անոր պրտականութիւնը եղած է ընտանիքին համար ուտելիք բերել եւ պաշտպանել իր կիներն ու զաւակները: Կնոջ դերը եղած է տան մէջ ստեղծել ներդաշնակութիւն, հանգիստ մթնոլորտ, սէր եւ երջանկութիւն: Կինն է կեանքը հաճոյք դարձնողը:

Իսկ 21-րդ դարուն լրիւ տարբեր է: Աւելի յաճախ կինը ինք պէտք է պայքարի տղամարդու աշխարհին մէջ՝ »արեւի տակ« տեղ գտնելու համար: Ժամանակակից տիկինը կը ստեղծէ տղամարդուն հաւասար ասպարէզ, կը մասնակցի քաղաքական մրցավազներուն եւ ամէն օր կ'ապացուցէ, որ ինք ստեղծուած է ո՛չ միայն տնային աշխատանքի եւ կենցաղի համար:

Իսկ կը փափաքի՞ արդեօք տղամարդը դղեակներ կառուցել, եթէ կողքին կին կայ, որ ունի ամէն ինչ ինքնուրոյն ընելու հնարաւո-

րութիւն:

Ահա քանի մը հասարակ խորհուրդ, որոնք կ'օգնեն ձեր սիրելիին մէջ բացայայտելու ուժեղ տղամարդու կողմը, իսկ ձեզ՝ պահպանելու կանացիութիւնը:

1) Տղամարդը կը սիրէ աչքերով - Տղամարդիկ կը սիրեն գեղեցիկ կիները, ատիկա գաղտնիք չէ: Իսկ ի՞նչ կը նշանակէ գեղեցիկ կին՝ տղամարդու կարծիքով: Առաջին հերթին, տղամարդոց 80%-ը կը նախընտրէ զգեստներով աղջիկները: Կանացի կերպարը անոնց աւելի կը գայթակղէ, քան տղամարդու զգեստապահարանէն տաբատները: Երկրորդը, անոնք կը սիրեն կլորաւուն կազմուած քով կիները, ըլլան անոնք փարթամ կլոր ազդերը, թէ՛ կուրծք: Եթէ բնութիւնը ձեզ չէ պարզեւած անոնցմով, ճիշդ ընտրուած հագուստը երբեմն հրաշքներ կը գործէ: Եւ երրորդը՝ տղամարդիկ գեղեցիկ կը համարեն առողջ կանանց: Որքան ալ հետեւիք ձեր արդուզարդին, երբեք տղամարդուն հաճելի չէք թուիր, եթէ ունիք վնասակար սովորութիւններ:

2) Տղամարդիկ կը սիրեն քնքուշ կիները - Թոյլ տուէք տղամարդուն ուժեղ զգալ ձեր կողքին: Ձեր սիրելին պէտք է ձեր մէջ տեսնէ ոչ թէ ուժ, այլ՝ քնքշութիւն, եւ այդ ժամանակ ան իր վրայ կը վերցնէ հոգատար հերոսի դերը: Դուք, ի հարկէ, շատ բաներ կրնաք ընել, սակայն աւելի լաւ է խնդրէք ձեր սիրելիին:

Միայն իրական խելացի եւ իմաստուն կինը կրնայ թոյլ տալ տղամարդուն իրենց առաջնորդը ըլլալու:

3) Տղամարդիկ կը սիրեն ազնիւ եւ հետաքրքրական կիները իւրաքանչիւր կին կ'երագէ հանդիպիլ արքայազնին կամ դաստիարակել արքայազն իր ընտրեալի մէջ: Արքայադատեր կերպարը, ֆիլմերու մէջ, յաճախ սխալ պատկերուած է: Արքայա - դուստրը քմահաճ գեղեցկուհի չէ, որ հրամաններ կ'արձակէ:

Ժամանակակից արքայադուստրը կը յարգէ իր տղամարդը եւ ինքզինք, ան հետաքրքրական գրուցակից է, որ կրնայ լսել իր տղամարդուն: Ան անկեղծ շնորհակալ է անոր հերոսութիւններուն համար եւ կրնայ ատիկա ցոյց տալ: 21-րդ դարու իսկական տիկինը հետաքրքրական, ստեղծագործող եւ ինքնաբաւ կին է:

Սպանախի Օգտակար Յատկութիւնները, Որոնք կը Զարմացնեն Ձեզ

Սպանախը ունի բազմաթիւ օգտակար յատկութիւններ: Այս բանջարեղէնը հարուստ է կենսաանիւթերով, հակաօքսիտանթներով, շարք մը օգտակար նիւթերով: Կը նպաստէ ուղեղի աշխատանքին: Հետազօտութիւնները ցոյց կու տան, որ սպանախի օգտագործումը կրնայ նպաստել ուղեղի աշխատանքին, կանխարգիլել թուլամտութեան առաջացումը: Անիկա կ'օգնէ մկանային զանգուած ձեռք բերելու: Կը պաշտպանէ սրտի առողջութիւնը: Սպանախը ունի օմեկա-3 ճարպթթուներ, որոնք կ'օգնեն կանխարգիլելու կաթուածը, սիրտ-անոթային հիւանդութիւնները:

Սպանախը կը նպաստէ տեսողութեան, կը կանխարգիլէ քաթարակտը, կը պաշտպանէ անդամանի-

շակագոյն ճառագայթներու ազդեցութեան:

Կը վերահսկէ ախորժակը, հնարաւորութիւն կու տայ պաշտպանելու աղիներու առողջութիւնը, շաքարի զարգացման հաւանականութիւնը:

Կրնայ նուազեցնել կաթուածի հաւանականութիւնը: Սպանախը բաւական շատ քալիում կը պարունակէ:

Անիկա կը նպաստէ մաշկի առողջութեան: Ա կենսանիւթը կ'օգնէ կանխարգիլելու մաշկի վաղաժամ ծերացումը:

Կ'օգնէ կանխարգիլելու ճնշախտը: Սակնիտմի անբաւարար մակարակը կապուած է սերթօնի մակարակի նուազման հետ: Այս հորմոնի ցած մակարդակը կապուած է ճնշախտի հետ:

«Լիվերպոլ» - «Տոտենհեմ»՝ 2:1. Ախոյեանական ինտրիգը Պահպանում է



Պրեմիեր լիգայի 32-րդ տուրի կեդրոնական խաղում «Լիվերպոլ»-ը «Էնֆիլդ»-ում հիւրընկալեց «Տոտենհեմ»-ին:

Հանդիպման հաշիւը 16-րդ րոպէին բացեց Ֆիրմինոն: 70-րդ րոպէին պատասխան գնդակը հեղինակեց Մոուրան: Երբ թոււմ էր, տանտէրերն այս խաղից յետոյ հրաժեշտ կը տան ախոյեանական չոյսերին, 90-րդ րոպէին ինքնագոլի հեղինակ դարձաւ Ալդերվելդը:

Այս խաղից յետոյ մերսիսայթիցները 79 միաւորով առաջին տեղում են, «Խիսններ»-ը մէկ աստիճան ցածր են՝ ակտիւում ունենալով 61 միաւոր:

Յաւելենք, որ «Մանչեսթեր Սիթի»-ն ունի 77 միաւոր, սակայն մէկ խաղ պակաս է անցկացրել:

«Մանչեսթեր Եունայթեդը» նոր պայմանագիր կնքեց Ուլե-Գունար Սուլշերի հետ

«Մանչեսթեր Եունայթեդը» պաշտօնապէս յայտարարել է թիմի գլխաւոր մարզիչ Ուլե-Գունար Սուլշերի հետ գործող պայմանագիրը երկարաձգելու մասին:

Նորվեգացի մասնագէտի նոր պայմանագիրը նախատեսուած է 3 տարով, փոխանցում է ակումբի կայքը:

Սուլշերը 2018-ի Դեկտեմբերին էր գլխաւորել անգլիական ակումբը՝ փոխարինելով պորտուգալացի Ժոզէ Մուրինյոյին: Նրա նախորդ պայմանագիրը նախատեսուած էր մինչեւ ընթացիկ մրցաշրջանի ավարտը:

Ուլե-Գունար Սուլշերի գլխաւորութեամբ «Մանչեսթեր Եունայթեդն» Անգլիայի առաջնութիւնում անցկացրել է 13 հանդիպում, տարել 10 յաղթանակ, կրել մէկ պարտութիւն եւ գրանցել 2 ոչ ոքի: Ախոյեանների լիգայում մանչեսթերեան ակումբը 1/8 եզրափակիչում յաղթահարել էր ֆրանսական ՊՍՎ-ի արգելքը:

Անգլիայի Պրեմիեր Լիգան Ռեկորդային Եկամուտ Կ'ունենայ Յեռարձակման Իրաւունքի Վաճառքից

Անգլիական Պրեմիեր լիգան առաջիկայում նոր պայմանագիր կը կնքի արտերկրում խաղերի հեռարձակման իրաւունքի վերաբերեալ:

The Telegraph-ի համաձայն՝ գործարքը կ'աւելանայ 25 տոկոսով եւ կը կազմի ռեկորդային 4.73 միլիարդ եւրո: Նոր պայմանագիրը նախատեսուած կը լինի մինչեւ 2022 թուականը:

Պատմութեան մէջ առաջին անգամ Պրեմիեր լիգայի առաջատարները հեռարձակման իրաւունքի վաճառքից կը ստանան աւելի շատ գումար, քան հետնապահները: Սպասուած է, որ տարբերութիւնը կը կազմի 87,5 տոկոս: Անգլիայի ախոյեանը կը ստանայ լրացուցիչ 29 տոկոս:

Այժմ Պրեմիեր լիգայի իւրաքանչիւր ակումբ տարեկան 47.5 միլիոն եւրո է ստանում արտերկրում խաղերի հեռարձակման իրաւունքի վաճառքից:

Գրիգմանը Ձանձրացել է իր Ապագայի Շուրջ Պտտուող Լուրերից

Ֆրանսայի հաւաքականի յարձակուողն ասում է, որ չոզնել է «Ատլետիկոյից» հեռանալու մասին լուրերից: Նա մեկնաբանել է Իսլանդիայի հաւաքականի հետ վերջերս կայացած խաղը՝ շօշափելով նաեւ իր ապագայի վերաբերեալ թեման:

- «Բարսելոնա» տեղափոխուելու լուրերի մասին կ'ասեմ հետեւեալը. չոզնել եմ ամէն տարի նոյն կանխատեսումները լսելուց: Ամառային տրանսֆերային պատուհանի նախօրէին մամուլում կրկին բարձրացուել է այդ թեման, բայց ես արդէն իմունիտետ եմ ձեռք բերել այդպիսի խօսակցութիւնների դէմ:

Իսլանդացիների հետ մրցավէճի մասին կարող եմ ասել, որ մեզ համար դժուար էր մրցակցել այդ հաւաքականի հետ, բայց ես կարողացաւ լաւ հանդէս գալ եւ կոլ խփել: Հասկանում եմ, որ ես պէտք



Սուսաննա Ստեփանեանը՝ Ծիւտոյի Եւրոպայի Գաւաթակիր

Հայաստանը ներկայացնող ճիւտոյիստ Սուսաննա Ստեփանեանը յաղթող է ճանաչուել Տուլա քաղաքում կայացած ճիւտոյի Եւրոպայի մինչեւ 18 տարեկանների գաւաթի խաղարկութիւնում:

Հայմարզուհին 40 կգ քաշային կարգի մրցաշարում յաղթելով ռուսաստանցիներ Ալինա Լազարեւային եւ Սոֆիա Աֆանասեւային, մտաւ եզրափակիչ: Վճռորոշ մարտում մեր մարզուհուն տեխնիկական յաղթանակ շնորհուեց, քանի որ նրա մրցակից կարինա Մինիկաեւան որակազրկուեց:

Իսկ ահա մեր պատանի ճիւտոյիստներից մետալ նուաճելուն մօտ էր միայն 66 կգ քաշային Վահէ Աղանեանը, որը, սակայն, 3-րդ տեղի համար գտեմարտում պարտուեց ռուսաստանցի Սայլան Շաբիխանովին:

Թիմային հաշուարկով Հայաստանը զբաղեցնում է 3-րդ տեղը՝ հետ մնալով Ռուսաստանից եւ Իտալիայից:



«Արսենալում» Հենրիխ Մխիթարեանի Ապագան Մշուշոտ է

Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանի ապագան Լոնտոնի «Արսենալում» հարցականի տակ է, գրում է mirror-ը:

Անգլիական ակումբը պատրաստ է քննարկել 30-ամեայ Մխիթարեանի տրանսֆերի վերաբերեալ առաջարկները, որպէսզի աւելացնի ամառային տրանսֆերների համար նախատեսուած պիւտճէն: Աւելի վաղ նշուած էր, որ «Արսենալ» գլխաւոր մարզիչ Ունայի Էմերին 45 միլիոն ֆունտ ստերլինգ է ստանալու ամառային տրանսֆերների համար:

Հենրիխ Մխիթարեանը նաեւ լոնտոնեան ակումբի ամենաբարձր վարձատրուող ֆուտպոլիստներից է եւ ստանում է շաբաթական 180 հազար ֆունտ ստերլինգ աշխատավարձ:

Հայ կիսապաշտպանը 2018-ի Յունուարին «Մանչեսթեր Եունայթեդից» է տեղափոխուել «Արսենալ», որի կազմում մասնակցել է Անգլիայի ընթացիկ առաջնութեան 18 խաղի, դարձել 6 կոլի ու 4 կոլային փոխանցման հեղինակ: Մխիթարեանի գործող պայմանագիրը նախատեսուած է մինչեւ 2021-ի ամառ:



Դիեգո Մարաշլեանը Խփել է «Լոս Անճելոսի» 5-րդ Կոլը

MLS-ի կանոնաւոր առաջնութեան 5-րդ տուրում «Լոս Անճելոսը» մրցակցի խաղադաշտում 5:0 հաշուով վստահ յաղթանակ է տարել «Սան Խոսեի» նկատմամբ:

«Լոս Անճելոսի» 5-րդ գոլը 67-րդ րոպէին խփել է 21-ամեայ ուրուգուական յարձակուող Դիեգո Ռոսի Մարաշլեանը, որն անցկացրել է ամբողջ հանդիպումը: Դա Մարաշլեանի երրորդ կոլն էր ընթացիկ առաջնութիւնում:

5 խաղից յետոյ «Լոս Անճելոսն» ունի 13 միաւոր եւ գլխաւորում է Արեւմտեան գօտու մրցաշարային աղիւսակը:



Ռոջեր Ֆեդերերի 101-րդ Տիտղոսը

Աշխարհի 5-րդ ռակետ Ռոջեր Ֆեդերերը նուաճեց Մայամիում անցկացուած թենիսի «Մասթերս 1000» շարքի մրցաշարի յաղթողի կոչումը:

Եզրափակիչում 37-ամեայ շուեյցարացին 6:1, 6:4 հաշուով վստահ յաղթանակ տարաւ մրցաշարի գործող յաղթող ամերիկացի Ջոն Իսների նկատմամբ: Մրցախաղը տեւեց 1 ժամ 3 րոպէ:

Ռոջեր Ֆեդերերը 50-րդ անգամ խաղաց «Մասթերս» շարքի մրցաշարի եզրափակիչում եւ նուաճեց կարիերայի 101-րդ տիտղոսը:



Եմ հաւաքականին: Հիմա մնում է «Ատլետիկոյի» հետ յաջող եզրափակել մրցաշրջանը Պրիմերայում, - ասել է Գրիգմանը:

ՄՐՏԻ ԽՕՍՔ՝ ԿԱՐԱՊԵՏ ՀԱՆՆԵՍԵԱՆԻ ՄԱՅՈՒԱՆ ՔԱՌԱՍՈՒՆՔԻՆ ԱՌԻԹՈՎ

Քառասուն օր առաջ հողին յանձնուեցաւ լիբանանեան սփիւռքի առաջին սերունդի ներկայացուցիչներէն, հայ մշակութի, նամանական երգարուեստի տարածման նուիրեալ անձնաւորութիւն մը՝ յանձին կարապետ Հաննէսեանի:



1954-էն ի վեր, հայ գեղարուեստական գրականութեամբ համակուած արուեստասէր եղբօր՝ Յովհաննէս Հաննէսեանի հետ միասին հրատարակեցին «Շիրակ» երգարանը, որ հայ դպրոցներու եւ հաստատութիւններու, ինչպէս նաեւ ընտանիքներու յարկերէն ներս ստեղծեց հոգեթով մթնոլորտ:

«Շիրակ» երգարանը եղաւ հայ երգարուեստի կամուրջը, Հայաստանի երգիչները ծանօթացնելով ոչ միայն Լիբանանի, այլ նաեւ Սփիւռքի բոլոր գաղութներէն ներս:

Իսկ Հաննէսեաններու Շիրակ գրատունը դարձաւ հին եւ նոր գրողներու, երգիչ-երգչուհիներու, նաեւ իմ հանդիպման վայրը:

Որեւէ գրեական պիտոյք առնելու նպատակով կարճ ժամանակի մը համար երբ կ'այցելէի գարատուն, քանի մը նախադասութիւն փոխանակելէ ետք ողբացեալին հետ, հետաքրքրական զրոյցի մը մէջ կը մտնէինք երաժշտական տարբեր բնագաւառներու անցողորմէրուն մասին, չգալով վայրկեաններու սահանքը:

Ձիս տպաւորած է իր հետաքրքրութիւնը եւ պատրաստակամութիւնը տուեալ տարուան իր հրատարակելիք «Շիրակ» երգարանի մէջ անպայմանօրէն անդրադառնալու հայ պատանի թէ երիտասարդ տաղանդաւոր երգիչ-երգչուհիներու եւ նուագողներու ունեցած ելոյթներուն, տեղ յատկացնելով անոնց կենսագրութեան եւ նկարներուն եւս:

Ուսանողական տարիներուս ամառուան արձակուրդներուն ընթացքին, իմ հարազատ Շիրակ գրատուն այցելութիւններս կը շարունակուէին, եւ շնորհիւ Պրն. Կարապետի հաճելի գրուցակից ըլլալուն, մեր համով-հոտով զրոյցները նոր թափ կ'առնէին մեր երաժշտական աշխարհի նորութիւններուն եւ դէմքերուն մասին: Իսկ եթէ հաճելի գուզադիպմամբ մը այնտեղ ներկայ գտնուէր նաեւ ողբացեալին կողակիցը՝ բարեհամբոյր եւ նոյնքան հաճելի գրուցակից Տիկ. Սիրվարդը, հետաքրքրական պահերը անվերջանալի կը դառնային:

Յիշողութիւններուս մէջ անջնջելի կը մնան լիբանանեան պատերազմի շրջանին առանց ելեկտրականութեան ու ջրամատակարարման օրերուն ողբացեալին ջանասիրութիւնը, ան ճիգ չէր ինայեր, որ երգարանի յաջորդ թիւը ժամանակին լոյս տեսնէր եւ ըլլար աւելի բովանդակալից քան նախորդը:

Եւ այսօր եւս երախտապարտ կը զգամ, որ զիս մասնակից դարձուցած էր այդ նուիրական գործին: Այդ դժուարին օրերուն, երբ ան չէր կրնար ապահովել որոշ երգերու տպուած նօթաները, գրատան աշխատանոցին մէջ փոքր երաժշտական սարքի մը վրայ երգերը լսելով կը նօթագրէի գանոնք մեծ հաճոյքով եւ պատասխանատուութեամբ:

Իսկ վարձատրութիւնը չէր ուշանար... նոր լոյս տեսած երգարան մը, իր իսկ մակագրութեամբ:

Մեծ է կորուստը ողբացեալին նման ժողովրդականութիւն շահած անձնաւորութեան մը: Ի խորոց սրտի կ'ըսեմ՝ վարձքը կատար, սիրելի Կարապետ Հաննէսեան, ննջէ հանգիստ, քանզի քու վաստակովդ ապահովեցիր յաւերժութիւնը կեանքիդ:

Յիշատակդ միշտ յարգող՝
ՀՈՒՐԻ ՍԱՐԱՖԵԱՆ-ՍԱԹԵԱՆ

Գալուստ Կիւլպէնկեանի Ծննդեան

Շարունակուած էջ 13-էն

շատակելով այն բոլոր արժէքները, որոնց դաւանած է եւ յատնաբերած, փորձելով գանոնք կիրարկել իր կեանքին մէջ՝ դիմագրաւելու համար այսօրուան աշխարհի մարտահրաւէրները:

Այնուհետեւ ներկայացուցաւ համերգ մը՝ «Մեծ պագար» խումբին կողմէ, որ յատկանշական էր նկատի ունենալով անոնց երգացանկին մէջ ընդգրկուած երգերուն հինգ լեզուները (հայերէն, անգլերէն, ֆրանսերէն, փորթուկալերէն եւ թրքերէն), որոնցմով Կիւլպէնկեան իր կեանքի ընթացքին խօսած ու հաղորդակցած է: Այս խումբը իր բազմազգեան ելոյթով Փորթուկալի երիտասարդութեան հրամայող երաժշտական յորինումներու փունջ մը, որ մեծապէս գնահատուեցաւ հանդիսատեսին կողմէ:

Նոյն օրը ժամը 17.30-ին տեղի

ունեցաւ Կիւլպէնկեանի անունով դրոշմաթուղթերու հրատարակում մը՝ Փորթուկալի եւ Հայաստանի պատկան մարմիններուն կողմէ, ներկայութեամբ՝ Մարթին Էսաեանի եւ Հիմնարկութեան տնօրէնութեան:

Կիւլպէնկեանի նուագախումբին կատարողութեամբ ներկայացուցաւ Տվորթաքի 9-րդ համանուագը եւ Պեթհովէնի 9-րդ համանուագը 4-րդ շարժումը:

Հուսկ բացումը կատարուեցաւ Կիւլպէնկեանին նուիրուած հոյակապ ցուցահանդէսին, կազմակերպութեամբ՝ Հայկական համայնքներու բաժանմունքի տնօրէն Ռազմիկ Փանոսեանի, ուր փորթուկալերէն, հայերէն եւ անգլերէն լեզուներով բացատրութիւններ տրուած էին ներկայացուած իրերուն մասին, գանազան յղումներ կատարելով Գալուստ Կիւլպէնկեանի ընտանիքին, գերդաստանին եւ բարեկամներուն: Հոն տեղ գտած

Ուխտագնացութիւն Դեպի Դսեղ

Շարունակուած էջ 16-էն

րած եարին տիրանալու: «Ձան Գիւլիմ», սեւ բախտ էին Անուշին գուշակել: Ահա այդ աշխարհի լեռները հմայքի կրակն էր վառել Յովհաննէսի բանաստեղծ հոգու տաճարի լոյսերը, որից յորդել էին նրա քնարի հնչիւնները: Փոքրիկ լճակ էր այդ բարձունքին, մեղմիկ ծփում, դիմացի սարերից եկած զեփիւռից, ալեակները արծաթ լոյս հագած, շողում արեւին: Այդ բարեպաշտ հօր տղան, իր լոռուայ աշխարհի վեհութեամբ առիքնած՝ ինչպէս չժպտար աշխարհին:

«Թումանեանն Հայաստանն ինքն է» ասել էր Ռուս բանաստեղծը, ինչքան ճշմարիտ էր նրան բնութագրել: Նա գնաց դէպի իր լոռուայ հազար-հազար տարիների խոնարհ մարդիկ, նրա հէքիաթները, առասպելները, նրանց հերոսներին կեանք պարգեւեց, այնքան առիքնող, որ երբեք չէր համարձակի մտածել, որ նրանք կենդանի մարդիկ չէին եղել: Սասուն աշխարհի Մհերի որդի Դաւիթի թուր կեծակի շողերի փայլը, նրա արմենական ոգու արկածումը նորէն նրանց աշխարհ բերել: Երգել իր հայրենի բնութեան հրաշապատումը, ժողովուրդի ազգային ոգին, նրա ուրախութիւնը, նրա վիշտը: Յովհաննէսը հասել էր իմ հայրենի Մուսա լեռան Եօղունօլուզ գիւղի դպրոց, եւ մայրիկիս խնդրանքով «Օշական» դասագրքից «Գիւրը» եմ կարդացել նրան, թախծադէմ նայել նրա վարդ այտերից հոսող արցունքի շիթերին: Նրա երգերը հայրենի աշխարհի հմայքի լոյսն են շողում, փոթորկում ընթերցողի հոգին Դեբետի փրփրակէզ ջրերով, մեղմում մեր հոգիների տուայտանքը, ջրերի վրայ վարսերը ծորած, ուռնի դարձած աղջկայ «Վուշ-վուշով», Փարուսանայ լճի կոհակներին իջած լուսնեակի դէմքի սպիտակ շողերով, ազգային ոգու հպարտութեան ճախրանքով: Յովհաննէսի քերթուածները երգի հրավառութիւն են, մի Արմէն երգահանի ներշնչանքով նրանք վերածուել են հոգեզմայլ մեղեդիներ, կարծես նրանք ժողովուրդի հոգու ալուսններից յորդած լինէին, հնչում են նրանք հայոց աշխարհում, դեռ ինչքան «Անուշներ» ու «Սարոներ» պիտի գան, որ դիւթեն Արմին-հային Յովհաննէսի երգերով: Յովհաննէս, իր երկու դուստրերի հետ եկել էջմիածնի տաճար: Նրա բախում էին նատուկ՝ առանց կուռի երկիրը տանուլ տուած, ցնցոտիներով գաղթական բազում Արմին ցեղի հայրերին:

էին նաեւ անոր նամակները, ճամբորդական նօթերը: Բացառիկ երեւոյթ մըն էր, ուր զգալի էր Հիմնարկութեան տնօրէնութեան եւ պատասխանատուներուն մեծ ներդրումը եւ ուր պատշաճօրէն տեղ գրաւած էին նաեւ անոր ընտանիքին եւ հայրութեան առնչուած գանազան դրուագներ:

Այս տարուան ընթացքին նախատեսուած են բազմաբնոյթ այլ ձեռնարկներ: Ապրիլ 5-ին պիտի ներկայացուի Տիգրան Մանսուրեանի «Հոգեհանգիստ»-ը, կատարողութեամբ՝ Կիւլպէնկեանի երգ-

ինք ու երկու դուստրերը սպիտակ երկար բժշկական արտահագուստ հագած, մօտեցել նրանց, հնարաւորին չափ օգնել դեղորայքով, սննդով, օթեւանել քաղաքի մարդկանց ազատ կացարաններում: Անձրեւ էր տեղացել, թռչում էին գաղթականները, Յովհաննէսը հրամայել էր պատուպարուէին տաճարում ու նրա օժանդակ շինութիւններում: Կաթողիկոսը, հրամայել էր Յովհաննէսին հաղողել, որ «Ամենայն Հայոց Կաթողիկոսը» հրամայում է գաղթականները դուրս գալին տաճարից: Յովհաննէս կարգադրել էր դուրս չգալ տաճարից, գնային կաթողիկոսին ասէին, որ «Ամենայն Հայոց բանաստեղծը» հրամայել է նրանք դուրս չգալին տաճարից: Յովհաննէս, դու միայն քեզ չկոչեցիր «Ամենայն Հայոց Բանաստեղծ», այլեւ հայոց աշխարհը քեզ թագադրեց իր «Ամենայն Հայոց Բանաստեղծ»-ը լինել: Յովհաննէս թումանեան իր ժողովուրդի գաւակն էր, նրան նուիրել այն ամէն նուիրականը՝ իր տասը գաւակներին, տղաներին՝ որպէս Անդրանիկ Փաշայի Հայ գինուոր, աղջիկներին՝ գթութեան քոյրեր:


«Հայոց հանճարեղ բանաստեղծ եղի՞չ Զարեմ պիտի գործ, Ես կարդում եմ նրան ու ասում, այդ հմուտ հանճարեղ Լոռեցիմ Յոմերի, Գոյթի հետ մի օր հաւասար ցատել է քէֆի, Եւ թաս է բռնել նրանց հետ, մեծարանք տուել ու առել, Ինչպէս իր պապերն են արել՝ իրար հետ խնձորի ցատելիս:

Նա մեծ էր աւելի, քան եղաւ: Երկնքի մամ ընդարձակ, Ովկեանի մամ իր ոգին ընդգրկել էր կեանքը անգար: Եւ ոգու ափերին ցատած՝ նա մայրում էր հայեացքով պայծառ Եւ որսում էր երգեր ու խոհեր եւ տեսնում էր չքնաղ երագներ...:

Նա մեծ էր հոգով, արիւնով: Արմատներ ունէր նա հոգում: Իր երգերը գեղջուկ մախրոց քրտիցքով էր նա ողողում: Հանճարեղ երգերում նրա իր երկրի արեւն էր շողում՝ Նա մեծ էր հոգով, արիւնով: Արմատներ ունէր նա հոգում:

Նա եկաւ հիւսիսից: Երբտերի փրկութեան փառքով էր նա մեծ: Բայց հեծում էինք մենք դարեր կրկնակի՝ գերութեան մերքոյ: Մեզ ճնշում էր բռունցքը հայրեանի: Նա կտրեց այն իր ձեռքով: Չունէիք մենք դարեր հայրեանի: Եւ նա մեզ հայրեանիք տուեց»:

Հայրամբին եւ նուագախումբին: Տէլլալեան երրեակը ելոյթ պիտի ունենայ Լիզպոնի սենեկային համոյթին հետ: Յունիսին թատերական ներկայացում նախատեսուած է՝ «Մարդը իր հազար տուներով» վերնագրով: Դասախօսութիւններու շարքին հարկ է նշել անոնք որոնք պիտի տրուին «Խալապական արուեստի սլացքը», «Բարեսիրութեան նոր ուղիները» բնաբաններով: Գիրքի մը մէջ պիտի ամփոփուին եւ հրատարակուին թոռնիկին՝ Միքայէլին գրած Կիւլպէնկեանի նամակները:



Հանրակարգերը պիտի մեկնին
կեսրուան ժամը 12-ին

Կլենտյլէն
Պըրպենքէն
Լա Քրետնքա / Թահանկաէն
Փասատինաէն
Մոնթպելլոէն
Հոլիվուտէն
Նորթ Հոլիվուտէն
Նորթ Հիլզէն
Էնսինոէն
Քանոկա Փարք / Վան Նայզէն

Փոխադրամիջոցներ ապահովելու եւ
յաւելեալ տեղեկութիւններու համար
հեռաձայնեցէք (888) 924-1915 թիւին:

ԱՐՊԱՐՈՒԹԵԱՆ ՔԱՅԼԱՐՇԱԻ

ԱՊՐԻԼ 24 ՄԻԱՍՄԻՆ ՔԱՅԼԵՆՔ

ԹՐՔԱԿԱՆ ՀԻՊԱՏՈՍԱՐԱՆ | ԺԱՄԸ 1-ԻՆ

6300 WILSHIRE BLVD , LOS ANGELES, CA 90048

FOR MORE INFORMATION VISIT WWW.MARCH4JUSTICE.COM |  ARMENIAN GENOCIDE COMMITTEE



WWW.MARCH4JUSTICE.COM | 888 924 1915